Բնապահպաններից շատերը տեւական ժամանակ առաջ են հայտարարել, որ այլեւս չեն զբաղվելու բնապահպանական խնդիրներով, ես կարծում եմ, որ դա իրենց որոշելիքն է: Նրանք այս տարիներին ոչ մի բնապահպանական հարցով չեն զբաղվել, քանի որ վաղուց հայտարարել էին, որ այլեւս չեն ուզում բնապահպանական գործունեությամբ զբաղվել:

Կարդացեք՝ էջ 4

Լսել եմ, որ ինքն արգելել է հայոց բանակում զինվորականներին խաչեր կրել՝ «Աշոտ Երկաթ» խաչեր էին բաժանվում, այդ խաչերն արգելվել է կրել… Սա ինչի՞ մասին է խոսում, որ ինքը խաչի թշնամին է: Ճիշտ է, շատերը չեն հանում, շարունակում են կրել, բայց այդ փաստն արդեն խոսում է իրենց՝ խաչի թշնամին լինելու մասին:

Կարդացեք՝ էջ 6



ԿԳՄՍ նախարարությունում քաոս է՝ ամեն օր օրենք են փոխում, որոշումներ կայացնում, հետո վերադառնում նախկին որոշմանը: Այս տարի, օրինակ, վերականգնվել է ուսումնական առաջադիմության պատճառով երկտարեցիության դրույթը: Իսկ մի ժամանակ ասում էին՝ երեխան, անկախ գնահատականներից, պետք է փոխադրվի հաջորդ դասարան:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 37 (4172), 12 մարտ, հինգշաբթի, 2026

www.hraparak.am

Որեր առաջ, ՔՊ վարչության որոշմամբ, նախընտրական ցուցակից հեռացված պատգամավոր Դավիթ Դանիելյանի դեմ, ըստ լուրերի, բողոք է ներկայացրել գործընկեր պատգամավոր Միքայել Թումասյանը: Հիշեցնենք, որ ՔՊ-ում ներքին քվեարկությունից հետո զտումներ են իրականացվում. ովքեր խախտել են քարոզչություն չանելու արգելքը, հեռացվում են ցանկից: Թումասյանի անունը շատերին անծանոթ կթվա, նրան հիմնականում կարելի է տեսնել Փաշինյանի երբեմնի աներձագ Հրաչ Հակոբյանի հետ: Նա մինչ պատգամավոր դառնալը Դավիթաշենի թաղապետն էր: Պատմում են, որ նա իր դիմումում նշել է, թե անձամբ է լսել, թե ինչպես է Դանիելյանը ներկուսակցական ընտրությունների պատվիրակներից մեկին հեռախոսով խնդրել, որ ընտրի իրեն: Ընտրությունների արդյունքներից հետո, ըստ ամենայնի, տեսնելով, որ այդ մեթոդն աշխատել է, իսկ ինքը՝ Թումասյանը, դուրս է մնացել անգամ ցուցակի 100-յակից, դիմում-բողոք է ներկայացրել ՔՊ ղեկավարությանը: Երեկ մեզ չհաջողվեց ոչ Դանիելյանի, ոչ Թումասյանի հետ զրուցել: Տեղեկացանք, որ Դանիելյանը կուսակցությանը խնդրել է ամբողջովին չչեզոքացնել իրեն՝ թույլ տալ, որ համապետական ընտրություններում գոնե Սյունիքում ՔՊ-ի վստահված անձը լինի: Եվ, ասում են, չեն մերժել, բայց դեռ հավանություն էլ չեն տվել՝ ակնարկելով, որ վստահությունը կորցրել է: Փաշինյանն անգամ հիշեցրել է, որ Դանիելյանը ժամանակին չընտրված համայնքապետ է: Վերջինս չի հանձնվում, ասում են՝ մարզային լրատվամիջոցները վերջին օրերին նրա գովքն են անում:

Նիկոլ Փաշինյանի կողակից Աննա Հակոբյանը նախօրեին Արմավիրի «Նանա» ռեստորանում խնջույքի է մասնակցել եւ, ականատեսների պատմելով, ողջ խնջույքի ընթացքում դուրս չի եկել պարահրապարակից՝ հավանաբար, Փաշինյանից բաժանվելն է նրան նման բարձր տրամադրություն հաղորդել: Խնջույքին նաեւ նրա շրջապատն է մասնակցել՝ «Իմ քայլի» աշխատակազմը, զոհվածի մայր, դատավոր Նաիրա Հովսեփյանը, Ստելլա Սարուխանյանը, լրագրող Նանե Իսրայելյանը: Նշել են 44-օրյա պատերազմում զոհված զույգ եղբայրների՝ Արմեն եւ Ռուբեն Շահինյանների եղբոր ծնունդը: Նորածինը՝ Շահինյան Ռաֆֆին, ծնվել է այս տարի՝ բանակի օրը: Խնջույքին ներկա են եղել նաեւ Արծրուն Հովհաննիսյանը եւ Փաշինյանի կողմից մերժված Շիշ բռնողը՝ դեռեւս պատգամավոր Հայկ Սարգսյանը:

Խոսողը հայ չէ

Լսում ես Եվրախորհրդի կամ որեւէ այլ միջազգային ամբիոնից Նիկոլ Փաշինյանի խոսքը եւ մտածում՝ եթե որեւէ օտարազգի չիմանա, թե ով է խոսողը, կարող է մտածել, թե խոսում է Ադրբեջանի կամ Թուրքիայի ներկայացուցիչը: Այս անգամ էլ Ստրասբուրգում է նա խոսել այն մասին, որ փակել է Արցախի թեման, եւ արցախցիներն այլեւս առհավետ պետք է բնակվեն Հայաստանում, ու մենք ոչ մի պահանջ չունենք մեր հարեւաններից, բացի այն, որ դեռ մի քանի հայրենակից ունենք իրենց երկրում, որոնք պետք է վերադառնան հայրենիք: Այն, որ նրանք ռազմագերիներ են, որ նրանց արդեն 2 տարի խոշտանգում են Ադրբեջանի բանտերում եւ ապօրինաբար դատում՝ ոչ մի խոսք: Փոխարենը փորձել է հերքել լուրերը՝ Հայաստանում քաղբանտարկյալներ չկան: Նույն այս պահին Հայաստանում, ըստ էության, սկսվել է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի լուծարման գործընթացը. այն այլեւս խանգարում է դեպի Թուրքիա ձգտող ՔՊ-ին: Եվ Փաշինյանին Ստրասբուրգում ծափահարում են, չնայած մի քանի տարի առաջ հենց այս դահլիճում են Արցախի օգտին բանաձեւեր ընդունել ու Ադրբեջանին դատապարտել բլոկադայի, էթնիկ զտման համար: Եվ ինչո՞ւ չպետք է ծափահարեն, եթե Հայաստանի ղեկավարն ինքն է առաջարկում մոռանալ Արցախը: Այս քայլերը, թվում է, կարող էին Հայաստանում եւ ողջ աշխարհում սփռված հայերի վրդովմունքն առաջացնել: Գոնե այնպիսի վրդովմունք, որ հայությունը որոշում կայացներ, որ ՔՊ-ն ու նրա պարագլուխը պետք է հեռանան եւ թույլ տան, որ այս թրքամետ ողորմելի քաղաքական գիծը փոխարինվի հայամետ, ինքնուրույն, արժանապատիվ քաղաքականությամբ, բայց այս իշխանությունը որոշել է ամեն գնով ընտրվել ու մնալ, որ իր սեւ գործն ավարտին հասցնի: Ու այդ նպատակով պատրաստ է ցանկացած քայլի՝ ներգրավելով իրավապահներին, ԿԸՀ-ին, օտար ուժերին:

ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի թիմը մեծ միջոցառում է նախապատրաստում, որը, հավանաբար, տեղի կունենա մարտի 16-ին՝ Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում: Այդ օրը կհայտարարվի Քոչարյանի գլխավորած դաշինքի մասին, որը մասնակցելու է հունիսի 7-ի համապետական ընտրություններին: Դաշինքում կլինի 2 ուժ՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը եւ Էջմիածնի համայնքապետի թեկնածու Սեւակ Խաչատրյանի «Առաջ» աջակենտրոն կուսակցությունը: Թեեւ դաշինքների համար անցողիկ շեմն այս ընտրություններից առաջ բարձրացել է՝ 7-ից դարձել 8 տոկոս, սակայն երկրորդ նախագահի թիմում կասկած չունեն, որ հաղթահարելու են շեմը, մի բան էլ ավելի: Չնայած իշխանությունն ու իր քարոզչամեքենան համառորեն հակառակն են պնդում: Ի դեպ, դաշինքի առաջին եռյակը 21 թվինն է. Ռոբերտ Քոչարյան, Իշխան Սաղաթելյան, Աննա Գրիգորյան: Անցած անգամ չորրորդ համարը Վահե Հակոբյանն էր՝ «Վերածնվող Հայաստան» կուսակցության նախագահը, այս անգամ, հավանաբար, կլինի Սեւակ Խաչատրյանը:

3 ՀԱԶԱՐ ԴՐԱՄԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՈՒՅԹ ԵՆ ՍԿՍԵԼ

Վերջերս Հակակոռուպցիոն կոմիտեում մի զավեշտալի վարույթ է նախաձեռնվել, որտեղ մեղադրյալն իրանցի է, իսկ «տուժողը»՝ պարեկ: Զադեհ անունով իրանցին՝ Իրանից եկող մեքենայի վարորդը, Վայոց Ձորի պարեկներից մեկին 3 հազար դրամ է առաջարկել՝ իրեն չտուգանելու համար, ինչն էլ արձանագրել է պարեկը, եւ փոքրիկ «կաշառքի» դեպքը գնացել հասել է Հակակոռուպցիոն կոմիտե, դատախազություն, այնտեղից էլ՝ Հակակոռուպցիոն դատարան եւ մակագրվել, ոչ ավել, ոչ պակաս՝ նախկին դատախազ, քաղաքական գործերից հայտնի դատավոր Վահե Դոլմազյանին, որը քննել է, օրինակ, Սամվել Կարապետյանի կալանքի միջնորդությունները եւ այլն: Իրանցու հանդեպ անգամ խափանման միջոց է կիրառվել՝ Հայաստանից բացակայելու արգելք, եւ հիմա իրավապահ համակարգում կատակում են, թե ՀՀ իրավապահները փրկել են իրանցուն պատերազմից, նա այժմ չի կարող մեկնել պատերազմական վիճակում գտնվող Իրան:

ԱՌԵՏ

Ո՞Վ Է ՏԵՍԵԼ, ՈՐ ԻՔՍ ԵՐԿԻՐ ՄԵԿ ԱՅԼ ԵՐԿՐՈՒՄ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ԱՆԻ ԵՎ ԹՎԵՐ ՆԿԱՐԻ

Հայաստանի արտաքին հետախուզության ծառայությունը, փոխանակ արտաքին վտանգներն արձանագրի եւ իր բուն գործառույթներով զբաղվի, երեկ հայտարարություն տարածեց՝ «ՀՀ քաղաքացիների նկատմամբ գործադրվող ճնշումների եւ սպասվող ընտրական գործընթացներին միջամտության վերաբերյալ», որը, ըստ Քրիստինե Գրիգորյանի, իրականացվում է այլ երկրում, այսինքն՝ Ռուսաստանում: Իբրեւ թե «տարբեր դերակատարներ փորձում են ճնշում գործադրել հայազգի եւ ՀՀ քաղաքացի հանդիսացող ու տվյալ երկրում տնտեսական գործունեությամբ զբաղվող անձանց նկատմամբ», նրանց մղելով աջակցել որոշ քաղաքական ուժերի՝ «ֆինանսական եւ կազմակերպական բնույթի գործողություններով»: Զրուցել ենք հասարակական-քաղաքական գործիչ **Արա Վարդանյանի** հետ:

Էջը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

- Հայաստանի արտաքին հետախուզության ծառայությունը փորձում է այս հայտարարությամբ կանխել Ռուսաստանում ապրող ՀՀ քաղաքացիների մասնակցությունը հունիսի ընտրություններում: Ինչո՞ւ է այս կառույցն աչք փակում Արեւմուտքից եկող բացահայտ ֆինանսական եւ քաղաքական աջակցության վրա, սակայն ակնարկում է ռուսական կողմին: Ինչից են այդքան վախենում իշխանությունները:

- Այս իշխանություններն ամենաշատը այս պահին վախենում են հավաքական ընդդիմության հաղթանակից: Չեմ կարծում, որ կոնկրետ մեկ ուժից են վախենում, ոչ, նրանք առհասարակ շատ են խոսում նույն Գյումրու ընտրությունների մասին, ինչը եւս մեկ անգամ փաստում է, որ նրանց վախն ընդդիմության համախմբվածությունից է: Նրանք հրաշալի տիրապետում են հարցումների արդյունքներին եւ իրականությանը, իսկ իրականությունն այն է, որ հասարակության ահռելի մեծամասնությունը դժգոհ է իշխանությունից եւ կարող է անցնել ընդդիմության կողմը: Այլ հարց է, որ Արտաքին հետախուզության սորոսական ղեկավարը մի քանի անգամ արդեն նման հայտարարություններ է անում: Եթե վերհիշենք՝ քանիցս Ալեն Սիմոնյանը, Նիկոլ Փաշինյանը խոսել են ինչ-որ հիբրիդային պատերազմի մասին, բայց չեն խոսում այն մասին, որ նույն ԱՄՆ-ն Հայաստանում սոցհարցումներ անցկացնելով՝ հիբրիդային պատերազմի դասական օրինակ է ցույց տալիս: Ո՞վ է տեսել, որ իքս երկիր մեկ այլ երկրում հարցումներ անի եւ իր ցանկությամբ թվեր նկարի: Սա ի՞նչ է, եթե ոչ հիբրիդային պատերազմ, հարձակման փորձ: Այս իշխանությունները վախենում են բոլոր երկրներում ապրող հայերի վերադարձից, խոսքը միայն ՌԴ-ի հայերի մասին չէ: Նրանք գիտակցում են, որ ամբողջ սփյուռքում, ոչ միայն ՌԴ-ում, մարդիկ չեն ընդունում Փաշինյանին: Սա խնդիր է իրենց համար: Ամեն անգամ, երբ Փաշինյանն իքս երկիր է մեկնում, մենք տեսնում ենք, որ նրա հետ հանդիպման են ժամանում շատ քիչ հայեր. 300 հազար հայ համայնք ունեցող երկրում Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպման է գնում ընդամենը 30-40 մարդ: Ի՞նչ է սա նշանակում. որ մարդիկ չեն ընդունում Փաշինյանին, եւ նա սարսափում է այն մտքից, որ կարող են այդ մարդիկ գալ եւ մասնակցել ընտրություններին: Նրա վախը Ռուսաստանի հայերից չէ միայն, ուղղակի Ռուսաստանի հայերը մի փոքր ավելի կապված են Հայաստանի հետ, նախ՝ որովհետեւ Ռուսաստանը տարածքային առումով մոտ է Հայաստանին, եւ հետո՝ շատերն էլ ուղղակի արտագնա աշխատանքի են մեկնում ՌԴ, եւ, այսպես թե այնպես, բոլոր ընտրություններին այդ մարդիկ գալիս են Հայաստան եւ իրենց քվեն տալիս այս կամ այն ուժին: Ի դեպ, ոչ ոք չգիտի, թե այդ մարդիկ, օրինակ, 2021 թ. ընտրություններին ում են տվել իրենց ձայնը: Փաշինյանի վախը նրանից է, որ իրեն բոլոր երկրներում մերժում են, ուստի իր համար ցանկալի է, որ դրսից ոչ մի հայ չգա Հայաստան եւ ընտրություններին չմասնակցի: Այս պահի դրությամբ՝ Նիկոլ Փաշինյանը պարտված է:

- Արեւմուտքից իշխանությունը դրամական միջոցներ է ստանում, Վենսը հայտնեց, որ աջակցում է Փաշինյանի վերարտադրմանը, ինչո՞ւ սա չի մտահոգում նույն Արտաքին հետախուզության ծառայությանը:

- Նույն այն տրամաբանությամբ, որ ասում են՝ Հայաստանը պետք է դառնա ԵՄ անդամ, ինչն ինքնին նշանակում է, որ սուվերենությունը որոշակի առումով անկում է ապրում, որովհետեւ, երբ դու դառնում ես ինչ-որ միության անդամ, ակնհայտ է, որ քո երկրի անկախությանը որոշակի առումով վնաս ես տալիս: Ինչո՞ւ, որովհետեւ շատ հարցեր դու չես որոշում, անում ես այն, ինչ ասվում է, եւ այլն: Այժմ նրանք խոսում են ԵՄ անդամ դառնալու մասին եւ այդ մտքի հետ հաշտ են, բայց երբ ինչ-որ մի մասնավոր անձ խոսում է այն մասին, որ Հայաստանը պետք է ավելի լավ կապեր ունենա ՌԴ-ի կամ Իրանի հետ, դրանից վայնասունի մեջ են ընկնում, պնդում են, որ դա հարձակում է ՀՀ ինքնիշխանության վրա եւ այլն: Իրենց պահում են նույն Եվրոպան եւ ԱՄՆ-ն, քանի որ նրանք կատարում են ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի պահանջները, տրամաբանությունը շատ պարզ է, իսկ այդ ամենը ձեռնտու է հավաքական Արեւմուտքին: Արդյունքում մեկուսացվում է Իրանը, ինչը մենք գիտենք, որ ձեռնտու է նույն Արեւմուտքին, ավելին՝ այն հավաքական Արեւմուտքի ամենագլխավոր ծրագրերից է:

- Իսկ Ռուսաստանն այս տարիներին երբեւիցե բացահայտ աջակցություն հայտնո՞ւմ է Հայաստանում որեւէ քաղաքական ուժի, Արեւմուտքը փաստացի իր աջակցությունը հայտնել է՝ բացահայտ:

- Անկեղծ ասած, ես երբեւէ չեմ նկատել, որ Ռուսաստանը Հայաստանում որեւէ ուժի աջակցություն հայտնի: Ավելին՝ Ռուսաստանի պահելաձեւը մեզ դուր գա, թե ոչ, հետեւյալն է. Ռուսաստանի իշխանությունները մշտապես աշխատում են տվյալ ժամանակահատվածի իշխանության հետ: Դրա վառ ապացույցն է այն, որ ՔՊ-ի բոլոր ներկայացուցիչներն ազատ ելումուտ ունեն ՌԴ, ավելին՝ Ռուսաստանի կողմից ընդունվում են ամենաբարձր մակարդակով:

ԿՅԱՆՔՈՒՄ ՈՉ ՄԻ ԲԱՆԻ ՉԵՆ ՀԱՍԵԼ, ԲԱՅՑ ՈՐՈՇԵԼ ԵՆ ԹՈՒՐՔԻ ՀԵՏ ԱԽՊԵՐՈՒԹՅՈՒՆ ԱՆԵԼ

ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյանը Ֆեյսբուքի իր էջում նախօրեին գրել էր, որ հանդիպում է ունեցել Թուրքիայի էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Ալփարսլան Բայրաքթարի հետ: Իհարկե, Խուդաթյանն այդ մտքից շատ երջանիկ էր, ինչպես երջանիկ կլիներ ցանկացած ՔՊ-ական, որին բախտ է վիճակվում արժանանալ որեւէ թուրքի կամ ադրբեջանցու ուշադրությանը եւ ձեռքսեղմումին: Սակայն ազգային ինքնագիտակցություն ունեցող յուրաքանչյուր հայ հիշում է, որ Ալփարսլան Բայրաքթարի ստեղծած բայրաքթարների միջոցով 2020 թվականին 5 հազար հայ երիտասարդ զոհվեց Արցախում: Անգամ նախընտրական այս փուլում իշխանությունները չեն կարողանում թաքցնել իրենց ադրբեջանամետությունն ու թրքասիրությունը: Մի օր Ադրբեջանին անհատույց հումանիտար ճանապարհ են առաջարկում՝ Նախիջեւան հասնելու համար, մի օր Ալիեւին են շնորհակալություն հայտնում, մի օր էլ Բայրաքթարի հետ են հանդիպում՝ ժպտադեմ լուսանկարվում: Զրուցել ենք ազատամարտիկ **Սեյրան Չիլինգարյանի** հետ:

- Օրվա իշխանությունները երբեք չեն թաքցրել, որ ցանկանում են բարիդրացիական հարաբերություններ ստեղծել Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ, որոնք Արցախում ցեղասպանություն եւ էթնիկ զտում արեցին, հիմա էլ դատում են արցախյան առաջնորդներին: ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյանը ջերմ հանդիպում է ունեցել բայրաքթարներ ստեղծողի՝ Էրդողանի փեսա Բայրաքթարի հետ: Ինչպե՞ս եք վերաբերվում նման շփումներին:

- Յուրաքանչյուր թշնամական պետության հետ բարեկամություն անելուն ես դեմ եմ եւ կարծում եմ, որ դա սխալ է, համենայնդեպս՝ մեր ժամանակների ազատամարտիկների համար: Մենք այլ ոգով ենք դաստիարակվել, մերժելի փաստ է դա: Հիմա եկել են՝ թազա հավեր եւ երկաթե ձվեր են ածում.... կյանքում ոչ մի բանի չեն հասել, անգամ սեփական ուժերով մի հավաբուն սարքած չկան, բայց որոշել են թուրքի հետ ախպերություն անել: Ի՞նչ ասես նման մարդկանց: Մենք գոնե պետք է վերադառնանք 90-ականների մեր տարածքներին, չեմ խոսում Արցախի հարցի մասին, ցեղասպանության մասին եւ այլն: Կոնկրետ Հայաստանի հետ կապված լիքը տարածքներ ունենք, որոնք Ադրբեջանի ձեռքին են, էդ բոլոր տարածքները պետք է մեզ վերադարձվեն, չի կարելի մոռանալ էդ ամենը: Այո, ես համաձայն եմ, որ դիվանագիտորեն ինչ-որ հարաբերություններ հաստատվեն, դա այլ հարց է, բայց ինչ մնաց ախպերություն անելուն՝ չէ, ես դրա կողմնակիցը չեմ: Ես ո՛չ Բայրաքթարի հետ ընկերություն կանեմ, ո՛չ էլ անգամ Բայրաքթարի հետ ընկերություն անող այլ պետության հետ: Իզուր չեն ասել՝ ասա ով է ընկերդ, ասեմ՝ ով ես դու:

- Իսկ ՀՀ տարածքով Ադրբեջանին հումանիտար ճանապարհ տալուն ինչպե՞ս եք վերաբերվում:

- Իսկ Ադրբեջանը մեզ համար ի՞նչ լավ բան է արել, որ մենք մեզ պատեպատ տալով ուզում ենք օգնել նրան: Շատ փիս ձեւով մտածում են Ադրբեջանի մասին, բայց Ադրբեջանը մեր գերիներին սպանում ա բանտերում: Էդպես ո՞նց կլինի: Էլ չենք խոսում Գեղարքունիքի սահմանների, Ջերմուկի ու այլ դիրքերի մասին, որտեղ թուրքը նստած է: Ամբողջ օրը խոսում են ադրբեջանական հողերի մասին, իսկ Արծվաշենը, Շահումյանն ու Գետաշենը գիտե՞ն, թե ում է պատկանում: Գանձակը, Նախիջեւանը նույնպես մեր պատմական հողերն են: Բայց մենք, ամեն ինչ մոռացած, խոսում ենք միայն առեւտուր անելու մասին, մեկ էլ՝ Ադրբեջանին ինչ-որ բաներ տալուց:

- Արման Թաթոյանը բացահայտեց, որ Ջերմուկի եւ Գեղարքունիքի սահմաններին 2025-ի ամռանը Ադրբեջանը տարածքային առաջխաղացում է ունեցել: Տեղյա՞կ եք այդ մասին:

- Այո, տեղյակ եմ եւ հավատում եմ, պաշտպանության նախարարն ասաց, որ նման բան չկա, բայց հո դատարկ խոսքերով չի՞: Չկա նման բան՝ ապացուցեք, որ չկա: Ամեն ինչ պետք է փաստերով լինի, Թաթոյանը փաստեր է ներկայացնում, իսկ իշխանությունը՝ ոչ: Եթե նման բան չկա, ինչո՞ւ նույն Թաթոյանին դատի չեն տալիս, իրենց մոտ դա լավ է ստացվում: Մենք՝ բոլորս, թուլացել ենք, ժամանակին մեզ գելուգազան էինք զգում, հիմա ընկել ենք մի կողմ ու չգիտես թե ինչի ենք սպասում:

ՄԱՍ

ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆԻ, «ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԹԵՎԵՐԻ» ՀԵՏ ԿԱՐՈՂ ԷԻՆՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ, ԵԹԵ ՈՒԶԵՆԱՅԻՆ, ԲԱՅՑ ՉԵՆ ՈՒԶՈՒՄ

Որոշ տեղեկություններով, իշխանության հույսն այն է, որ հունիսի 7-ին հնարավորինս մեծ թվով ուժեր կմասնակցեն համապետական ընտրություններին, եւ անցողիկ շեմը չհաղթահարելու արդյունքում ձայների մեծ քանակ կփոշիանա, ու դրա առյուծի բաժինը կգումարվի ամենաշատ ձայն ստացած ուժի քվեներին, իսկ ՔՊ-ում հույս ունեն, որ վարչական ռեսուրսի շնորհիվ իրենք ամենաշատ ձայներն են հավաքելու: Մի հույս էլ կապված է կցորդ ուժի ԱԺ մտցնելու հետ, եթե արեւմտամետներից որեւէ մեկին, օրինակ, Արամ Զավենի Սարգսյանին կամ Գուրգեն Սիմոնյան-Էդվարդ Անտինյան զույգին կարողանան անցկացնել ԱԺ եւ կոալիցիա կազմել նրանց հետ, ինչպես արեցին Երեւանի դեպքում: Տեղեկություններ կան, որ այս օրերին ՔՊ-ից որոշ ուժերի խրախուսում են, որ մասնակցեն ընտրություններին՝ խոստանալով հոգալ նրանց ընտրական ծախսերը: Որոշ ուժեր էլ, չնայած իշխանության դեմ են, բայց տեղ չգտնելով խոշոր միավորներում, նախընտրական առեւտրի սպասում ունեն, որ խոշորներն իրենց համագործակցության առաջարկ կանեն, որ եթե հրաժարվեն պայքարից ու չխանգարեն իրենց՝ փող կաշխատեն: ՔՊ-ից մեկուկես տարի առաջ հեռացած Հովիկ Աղազարյանի հիմնադրած ՄԱՍ կուսակցությունը նույնպես հայտարարել է ընտրություններին միայնակ մասնակցելու մասին, թեպետ ակնհայտ է, որ նրա եւ Հակոբ Ասլանյանի կուսակցությունը դժվար թե 40-50 հազար ձայն հավաքի եւ հաղթահարի անցողիկ 4 տոկոսի շեմը: Զրուցել ենք **Աղազարյանի** հետ:

- Պարոն Աղազարյան, Դուք իսկապե՞ս հավատում եք հրաշքի, որ կհաղթահարեք 4 տոկոսի շեմը, թե՞ ուզում եք մասնակցել եւ անուղղակի աջակցել Նիկոլ Փաշինյանին:

- Ես պատիվ ունեմ տեղյակ պահել Ձեզ, որ Հակոբ Ասլանյանն ու Հովիկ Աղազարյանը կողքից չեն եկել եւ փորձել մտնել ինչ-որ տեղ, մենք պատգամավորներ ենք եւ քիչ թե շատ համեստ դիմագիծ ունեցող պատգամավորներ: Մեզ թվում է, որ կարող ենք օգտակար լինել մեր պետությանը եւ պետականությանը, էլի կարող է սխալվենք, գուցե մեր մասին ուռճացված կարծիք ունենք, բայց մեզ թվում է... Եթե չկարողանանք որեւէ ուժի հետ մտնել դաշինքային տրամաբանության մեջ, եթե չմասնակցենք ընտրություններին, կնշանակի՝ թողնում ու փախչում ենք մարտի դաշտից, հետեւաբար, ժողովուրդը պիտի ասի՝ ինքը գտնում է, որ մենք օգտակա՞ր ենք, թե՞ ոչ:

- Օգտակար լինելը մեկ բան է, բայց ռեսուրսները ճիշտ գնահատելը՝ այլ: Հիմա եթե պիտի մասնակցեք, մի քանի հազար ձայն տանեք, դրանով օգտակա՞ր եք լինելու, թե՞ ոչ: Ի դեպ, Ձեր խոսքում դաշինքային տրամաբանությունից խոսեցիք, գուցե հայտարարել եք մասնակցելու մասին, որ ձեզ առաջարկեն այդ ուժերը, կներեք, բայց շատերը քաղաքական առեւտրի են դուրս գալիս այս շրջանում:

- Ես չեմ բացառում, որ որոշ ուժեր Ձեր ասած տարբերակով կգնան, բայց վերադառնանք մեր կուսակցությանը: Դիցուք՝ մենք տանելու ենք իքս ձայն, այդ ձայնը կարո՞ղ եք ասել՝ ո՞ւմ ընտրազանգվածն է. դա այն ընտրազանգվածն է, որը ո՞չ Ռոբերտ Քոչարյանին է ձայն տալու, ո՞չ Գագիկ Ծառուկյանին, այդ ընտրազանգվածն իշխանության հատվածից է, հետեւաբար, եթե մենք չհաղթահարենք 4 տոկոսի շեմը, հակառակ տրամաբանությունն է գործելու՝ այնտեղից ձայները բերելու ենք, մի մասը տանք ընդդիմությանը:

- Միեւնույն է՝ ընտրական փոշու զգալի մասն առաջատար ուժին է բաժին հասնելու:

- Այսինքն, Ռոբերտ Քոչարյանը գտնում է, որ հաղթելու է:

- Դուք էլ եք գտնում, բայց իրատեսության կանխավարկածից դիտարկեք:

- Բան չեմ ասում, բայց կրկնում եմ՝ «Մեր ձեւով»-ը, Ռոբերտ Քոչարյանն ու Գագիկ Ծառուկյանը հաստատ մեր առաջադրումից ավելի շատ են շահելու, քան իշխանությունները, որովհետեւ միասին ավելի շատ ձայն են հավաքելու՝ ես վստահ եմ դրանում:

- Բայց մանդատները ստանալուց հետո են կոալիցիաները ձեւավորվում, գուցե փոշին վճռորոշ դեր խաղա:

- Փոշին դեր է կատարում, բայց դա բաշխվում է բոլոր ուժերի մեջ, չէ՞: Ես ուզում եմ նաեւ տեղեկացնել, որ մենք այժմ բանակցությունների մեջ ենք եւ կիսում ենք Ձեր գնահատականը, որ դժվար է 4 տոկոսը հաղթահարելը, դրա համար բանակցությունների մեջ ենք եւ ամեն ինչ անելու ենք, որ գնանք դաշինքային տրամաբանությամբ, բայց մեկ ուժի ցուցակով, որ կարողանանք հաղթահարել 4 տոկոսի շեմը, իսկ որ պատրաստակամություն ենք հայտնել մենակ գնալ, դա էլ մեր մարտավարությունն է:

- Մի կողմից խոստովանում եք՝ կասկածում եք, որ 4 տոկոսը կհաղթահարեք, մյուս կողմից՝ միայնակ մասնակցելու մասին եք հայտարարել:

- Ոչ թե կասկածում եմ, այլ չեմ կարող երաշխավորված ասել, որ կհաղթահարեմ:

- Ո՞ր ուժերի հետ եք բանակցում:

- Գագիկ Ծառուկյանը թողնենք մի կողմ, «Միասնության թեւերը»՝ մի կողմ, «Հայաստան» դաշինքն ու Լեւոն Տեր-Պետրոսյանը եւս թողնենք մի կողմ, «Մեր ձեւով»-ը՝ նույնպես, մնացած բոլոր ուժերի հետ բանակցում ենք:

- Էլ ո՞վ մնաց տակը:

- Մնաց «Լուսավոր Հայաստան», Դոգ, «Արդար խոսք»... լիքը ուժեր կան: Հիմա պարզ է, որ Գագիկ Ծառուկյանը չի ուզենա մեզ վերցնել, նույնիսկ եթե սուրհանդակ ուղարկեմ Ծառուկյանի մոտ, ի՞նչ իմաստ ունի: Ասենք՝ Գագիկ Ծառուկյանի, «Միասնության թեւերի» հետ կարող էինք համագործակցել, եթե ուզենային, բայց իրենք հարմար չեն գտնի երեւի, հակառակ դեպքում՝ մի ձեւով հասկացնել կտային, մենք հո կամիկաձե չե՞նք:

- Ոչ մեկը հարմար չի գտնում, ժողովուրդը պիտի հարմար գտնի՞...

- Ընենց հաճույքով կսադրվեի ու մի երկու քաղցր բան կասեի, բայց, քանի որ վճռական փուլում ենք, չեմ սադրվում:

- Եթե ձեր բանակցություններն ապարդյուն անցնեն, այդուհանդերձ, միայնակ մասնակցելո՞ւ եք, եւ՝ գրողի՞ն, թե ձայն չեք փոշիացնի:

- Չէ, մենք միայնակ ենք գնալու եւ իշխանություն ենք վերցնելու, եթե քո հասարակությունն այն հասարակությունն է, որ մենակ վարչական ռեսուրսի վրա պիտի իշխանություն ձեւավորի, եթե այն հասարակությունն է, որ միայն փողի ուժով պետք է ձեւավորի, թքել եմ քո հասարակության վրա:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԱՅԴ ՄԱՐԴԸ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ Է ԹՈՒՐՔԱԿԱՆ ՇԱՀԸ

Մարտի 11-ին, Ստրասբուրգում, Եվրոպական խորհրդարանում իր ելույթում Նիկոլ Փաշինյանը հայտարարել է. «Մեր կարեւոր խնդիրներից է այն, որ փախստական դարձած ղարաբաղցի մեր քույրերի եւ եղբայրների էմոցիաները չշահարկվեն նրանց սին հույսեր տալով: Մեր ռազմավարությունն այս հարցում շատ հստակ է. ղարաբաղցի մեր քույրերն ու եղբայրները պետք է ստանան Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն եւ առհավետ տնավորվեն Հայաստանի Հանրապետությունում: Մենք արդեն սկսել ենք նրանց բնակավորման ծրագիրը, որի շահառու են դարձել 4 հազար 886 ընտանիքներ, այս պահի դրությամբ: Մենք մեր միջազգային գործընկերների հնարավորինս մեծ աջակցության կարիքն ունենք՝ խաղաղության ամրապնդմանն ուղղված այս խնդիրը լուծելու համար»: Փաշինյանը, առիթն օգտագործելով, կրկին շնորհակալություն է հայտնել Բաքվի բռնապետին եւ ասել, որ պատրաստ է Ադրբեջանին հումանիտար միջանցք տրամադրել՝ Նախիջեւանի հետ կապը պահելու նպատակով: Թեմայի մասին զրուցել ենք ՀՀԿ-ական նախկին պատգամավոր **Նաիրա Կարապետյանի** հետ:

- Փաշինյանը Եվրապառլամենտում հայտարարել է, որ արցախցիները պետք է ընդմիշտ մոռանան Արցախ վերադարձի մասին, ինչպես նաեւ՝ Ալիեւին է հերթական անգամ շնորհակալություն հայտնել, սակայն ոչ մի խոսք՝ հայկական շահի մասին, Արցախի էթնիկ զտման մասին եւ այլն: Ի՞նչ տպավորություն ունեք նրա ելույթից:

- Նիկոլ Փաշինյանի կողմից թուրքական օրակարգ սպասարկելը նորություն չէ: Ինչ-որ մի ամբիոնից մի հայտարարություն ավել, մի հայտարարություն պակաս, չի փոխում իրականությունը: Այդ մարդը սպասարկում է թուրքական շահը: Մեծ ուժերի օգնությամբ նա եկավ իշխանության: Հիշենք Սերժ Սարգսյանի հայտնի հայտարարությունը, որ ես ոչ թե պարտվել եմ Նիկոլին, այլ՝ մեծ խաղացողներին: Տեսնելով այս տարիներին, թե ովքեր շահեցին Նիկոլի՝ իշխանության գալուց, կարող ենք ենթադրել, որ խոսքը թուրքական ուժերի մասին էր: Մինչ օրս տեղի ունեցող պրոցեսները, հայտարարությունները փաստում են այն մասին, որ նրանց օրակարգը չի սպառվել: Որեւէ նորություն չկա նրանում, որ Նիկոլ Փաշինյանը կատարում է երկու հայտնի պետությունների պատվերները:

- Եթե Հայաստանի իշխանությունը փոքր-ինչ կարեւորեր հայկական շահը, հնարավոր չէ՞ր լինի գոնե արցախցիների՝ Արցախ վերադարձի հարցը բարձրացնել: Օրինակ, անվերջ խոսում են ազերիներին ՀՀ-ում վերաբնակեցնելու մասին, խոսում են անհատույց միջանցք տալու մասին, դրա դիմաց գոնե որոշ պահանջներ էլ այս կողմից չեն դրվում եւ այլն:

- Արցախցիների վերադարձի իրավունքը որեւիցե կապ չի կարող ունենալ ադրբեջանցիների վերադարձի հետ, եթե խոսում ենք ազերիների վերադարձի մասին, ապա պետք է նկատենք, որ նույն հարթության մեջ են մեր այն հայրենակիցները, ովքեր Բաքվից, Սումգայիթից գաղթել են: Արցախցիների վերադարձի իրավունքը, իրենց սեփական հող հանդիսացող, միջազգային բոլոր նորմերը պահպանած, ինքնորոշման իրավունքի համար պայքարած վերադարձի հարցը չի կարող մի հարթության վրա դրվել ազերիների վերադարձի հետ: Արցախի ժողովուրդը ենթարկվել է էթնիկ զտման: Ադրբեջանցիներին բավարար ժամանակ է տրվել, որպեսզի լուծեն իրենց գույքային հարցերը, նրանց տրվել է անվտանգ ճանապարհ՝ Հայաստանը լքելու համար: Ի դեպ, Հայաստանը լքելը եղել է նրանց սեփական որոշումը, նրանց ոչ ոք Հայաստանից չի վռնդել: Անգամ այս հարթության մեջ թուրքերի օրակարգն այն է, որ եթե մենք խոսում ենք արցախցիների վերադարձի մասին, իրենք էլ ազերիների վերաբնակեցման մասին կխոսեն: Սրանք տարբեր քեյսեր են, եւ պետք չէ համեմատել: Եթե մենք մի օր ունենանք ազգային իշխանություններ, իսկ ես վստահ եմ, որ ունենալու ենք, ապա Ադրբեջանը պետք է մի շարք հարցերի համար պատասխան տա: Ադրբեջանը կատարել է մի շարք հանցագործություններ մարդկության հանդեպ, եւ հենց սա է պատճառը, որ խաղաղության պայմանագիր կոչված թղթի կտորի մեջ մտցված է առանձին մի կետ, ըստ որի՝ Հայաստանը հրաժարվում է Ադրբեջանի դեմ միջազգային հայցերից: Թեպետ խորամանկության են դիմել, նշել են կողմերը, սակայն պարզ է, թե կողմ ասելով որ կողմին նկատի ունեն: Եթե մենք ունենայինք մի փոքր ազգային իշխանություն, հաստատապես այս վիճակին չէինք հասնի, իսկ մեր երկրի ղեկավարը բոլոր հարմար առիթները պետք է օգտագործեր՝ խոսելու արցախցիների վերադարձի մասին, հայկական ժառանգության պահպանման մասին եւ, որ ամենակարեւորն է՝ ինքնորոշման իրավունքի ճանաչման մասին: Ներկա իշխանություններն այդ ամենը դրել են հիշատակման արգելանքի տակ:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՎԱՆԱՁՈՐ

Մարտի 9-ին կայացավ Վանաձոր համայնքի ավագանու նիստը՝ 17 անդամի մասնակցությամբ: Փաստն ինքնին ուշագրավ է, քանի որ վերջին անգամ նիստ կայացել էր մոտ մեկ տարի առաջ: Քաղաքի համար, որն ունի Հայաստանի երրորդ քաղաքը լինելու կարգավիճակ, ավագանու նիստերը պետք է սովորական աշխատանքային գործընթաց լինեին, սակայն իշխանությունը շուրջ

ՄԻ ՆԻՍՏ Է ԵՂԵԼ, ՄԱՐԶՊԵՏՆ ԱՍՈՒՄ Է՝ «ՄԱՐԶԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՀԱՂԹԱՀԱՐՎԱԾ Է»

4 տարի կաթվածահար է արել այս քաղաքի կառավարումը: Նիստին ելույթ ունենալով՝ Լոռու մարզպետ Արեն Մկրտչյանը նշեց. «5 ամիս շարունակ տասնյակ հանդիպումներ, ժամեր տեւած քննարկումներ եմ ունեցել ավագանու նիստի կայացման նպատակով՝ հավատալով, որ հանուն Վանաձորի զարգացման ավագանու նիստը կայանալու է», եւ արձանագրեց. «Մարզկենտրոնի կառավարման ճգնաժամը հաղթահարված է»:

Արդյո՞ք իսկապես կառավարման ճգնաժամի լուծում է այն, որ ավագանու 1 նիստ է կայացել, արդյո՞ք սա նշանակում է, որ խնդիրները հաղթահարված են, եւ այսուհետ ավագանու նիստերը կայանալու են կանոնավոր: Վերջին չորս տարիների ընթացքում ավագանու նիստերը հիմնականում չեն կայացել ավագանու անդամների իրականացրած բոյկոտի՝ քվորում չապահովելու պատճառով, որովհետեւ իշխանությունը 2021-ի ընտրությունների արդյունքները ոտնահարեց եւ թույլ չտվեց, որ վանաձորցու քվեն աշխատի, եւ նրա կամքով իշխանություն ձեւավորվի: Ընտրություններից անմիջապես հետո ամենամեծ խմբակցության ղեկավարը՝ նախկին քաղաքապետ Մամիկոն Ասլանյանը կալանավորվեց, եւ փոքր խմբակցության ղեկավարին՝ օրենքի փոփոխությամբ, քաղաքապետի ժամանակավոր պաշտոնակատար նշանակեցին:

Ավագանու նիստերը, ըստ էության, կայացել են միայն այն ժամանակ, երբ քննարկվող հարցերը վերաբերել են համայնքի համար կենսական նշանակություն ունեցող հարցերին: Այս անգամ էլ ավագանին պետք է հաստատեր մոտ 32 միլիոն դոլար արժողությամբ ծրագրային փաթեթ, որը գնահատվեց որպես աննախադեպ ծավալի ծրագիր, որը կարող է էական ազդեցություն ունենալ քաղաքի զարգացման վրա:

Այս պատմությունը հասկանալու համար պետք է հիշել այն քաղաքական ու վարչական միջավայրը, որում հայտնվել է Վանաձորը վերջին տարիներին: Լոռիում տարածված մի ձեւակերպում կա. «Վանաձորը՝ Հայաստանի երրորդ քաղաքը, վերածվել է քաղաքական հակամարտության դաշտի»: Արդյունքում քաղաքի կառավարման գործընթացը կիսակաթվածահար վիճակում էր, եւ դա միայն քաղաքական խնդիր չէր: Երբ կառավարման համակարգը երկար ժամանակ չի գործում իր բնական ռիթմով, դա անդրադառնում է նաեւ քաղաքային կյանքի վրա: Ճանապարհների, ենթակառուցվածքների, ներդրումային ծրագրերի եւ համայնքային այլ խնդիրների լուծումը բարդանում է, դանդաղում: Այս համատեքստում վերջերս կայացած ավագանու նիստը, անշուշտ, կարեւոր իրադարձություն է: Սակայն վանաձորցիները հարցեր ունեն ինչպես ավագանուն, այնպես էլ՝ վարչական ղեկավարներին: Առաջին հերթին՝ ինչի՞ համար է նախատեսված 32 միլիոն դոլար արժողությամբ ծրագրային փաթեթը, որը ներկայացվեց որպես աննախադեպ ներդրում: Քաղաքի բնակիչների ցանկությունն է՝ հասկանալ, թե ինչ ծրագրերի իրականացմանն է ուղղվելու այդ գումարը, ինչ ժամկետներով եւ ինչ ակնկալվող արդյունքներով:

Երկրորդ կարեւոր հարցը վերաբերում է մանկապարտեզներին: Լուրեր էին շրջանառվում, որ Վանաձորի համայնքային մանկապարտեզները նախատեսվում է դարձնել անվճար: Նիստի ընթացքում ավագանին իսկապես կողմ քվեարկեց այդ նախագծին: Սակայն այստեղ եւս առաջանում է պարզ, բայց կարեւոր հարց՝ ինչպե՞ս է դա հնարավոր ֆինանսական տեսանկյունից: Ո՞ր աղբյուրների հաշվին է համայնքը պատրաստվում իրականացնել սոցիալական նշանակություն ունեցող նման որոշում:

Այս հարցերին պատասխան ստանալու մեր փորձերը, ցավոք, արդյունք չտվեցին: Համայնքապետի ժամանակավոր պաշտոնակատար Արկադի Փելեշյանի եւ աշխատակազմի քարտուղար Հայկ Վիրաբյանի հեռախոսները չպատասխանեցին: Համայնքապետարանի մամուլի խոսնակ Աստղիկ Ավետիքյանը նշեց, որ նման տեղեկություն չունի, համայնքի բյուջեում նման գումար չկա, եւ առաջարկեց հարցերը ներկայացնել գրավոր: Մենք, իհարկե, կարող ենք գրավոր հարցում անել, որի պատասխանը կստանանք (կամ չենք ստանա) օրեր անց, երբ այդ հարցն արդեն կորցրած կլինի հրատապությունը: Երբ խոսքը վերաբերում է ավագանու երկար սպասված նիստին, միլիոնավոր դոլարների ծրագրին եւ սոցիալական նշանակություն ունեցող որոշումներին, բնական է, որ քաղաքացիները ցանկանում են արագ ու հստակ տեղեկություն ստանալ: Եթե ավագանու վերջին նիստն իսկապես

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ԿՏՐՈՒՄ ԵՆ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ԻՆՉ-ՈՐ ՇԵՆՔԻՑ ԴԻՄԵԼ ԵՆ ԻՐԵՆՑ՝ ԱՍԵԼ, ՈՐ ԾԱՌԻ ՎՐԱ ՄԼԱԿՆԵՐ ԿԱՆ

Երեւանի քաղաքապետարանը շարունակում է ծառերի սպանդը, նախօրեին Ամիրյան փողոցում է մասսայական ծառահատում արել: «Կանաչապատում եւ շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Արմեն Բեգոյանի խոսքով՝ հատվել են «կենսունակության ավարտին մոտ գտնվող, փտած եւ խիստ դեֆորմացված, սաղարթ չունեցող ծառերը»: Ընդ որում՝ էլի են հատվելու, եւ չի կարող ասել, թե դեռ քանի ծառ է հատվելու, քանի որ «փողոցի մի հատվածն են արել»: «Բարեկարգում» եւ «հեռացնել» բառերն է օգտագործում, ասում է՝ «երբ ծառը հեռացրել ենք, հենց նույն օրն էլ տնկել ենք», իսկ հիմա չեն տնկում՝ սպասում են մայթի բարեկարգմանը, քանի որ «մաթեզրի եզրաքարերի շարելու ընթացքում ծառերը կարող են վնասվել»:

Աշխատանքներն իրականացվելու են 3 փուլով՝ Ամիրյանի սկզբից մինչեւ Զաքյան փողոց, այնուհետեւ՝ Մաշտոցի պողոտայից մինչեւ Սարյան փողոց: «Ամիրյան փողոցում ամեն 6 մետրը մեկ տնկվելու են միատեսակ ծառեր: Դրանք առնվազն 30 %-ով ավելի շատ են լինելու, քան մինչ այս եղել են»,- ասում է Բեգոյանը եւ վկայակոչում երեւանցիներին, ասում է՝ անձամբ է խոսել Ամիրյան փողոցի բնակիչների հետ, եւ «բոլորը կողմ են, որ փտած ու վտանգավոր ծառերը հեռացվեն»: Բայց թե ովքեր են սոցցանցերում համատարած դժգոհություն հայտնողները, որ ասում են, թե Երեւանը վերածվել է անապատի՝ ո՛չ ծառ կա, ո՛չ կանաչ, ո՛չ էլ շնչելու օդ, պարզ չէ: Այս իրավիճակում ակամայից հիշում ենք նախկին ակտիվ բնապահպաններին, որոնք 18-ից հետո անցել են ընդհատակ, իսկ ժամանակին ծառերն էին գրկում, օրերով հերթապահում, որ ՀՀԿ-ի իշխանության ժամանակ գեթ մեկ ծառ չհատվի:

Գուցե ժամանակին դրամաշնորհներ էին ստանում, հիմա չեն ստանում, դրա համար թքած ունեն ծառերի էլ, ծառահատումների վրա էլ: Բնապահպան Գագիկ Սուխուդյանին եւ նրա դստերը՝ նախկինում ակտիվ բնապահպան Մարիամ Սուխուդյանին դիմեցինք, որպեսզի գոնե կարծիք հայտնեն, թե ինչ են մտածում ճաղատացող մայրաքաղաքի մասին: Հայր Սուխուդյանը մեզ ասաց, որ պրոցեսներին չի հետեւում, տնից դուրս չի գալիս, սակայն բոլոր դեպքերում դեմ է, երբ ծառեր են հատվում, իսկ դուստրը, որն այնքան էր բնությունը սիրում, որ Ֆեյսբուքում գրանցվել էր «Մարիամխոտ» անվան տակ, կտրականապես հրաժարվեց խոսել ծառերի մասին:

Ծառահատումների թեմայով զրուցեցինք «Էկոլուր» ՀԿ նախագահ, բնապահպան **Ինգա Զարաֆյանի** հետ: Նախ, հետաքրքրվեցինք, թե ինչու են հայաստանյան բնապահպաններն անցել «ջրի հատակը» եւ չեն խոսում ծառահատումների մասին, ապա հարցրինք, թե ինչ կարծիք ունի ծառահատումների մասին, դրանք իսկապե՞ս միայն ոչ կենսունակ ծառերին են վերաբերում: «Բնապահպաններից շատերը, որոնց մասին խոսում եք, դեռ տեւական ժամանակ առաջ են հայտարարել, որ այլեւս չեն զբաղվելու բնապահպանական խնդիրներով, եւ ես կարծում եմ, որ դա իրենց խնդիրն է ու որոշելիքը: Նրանք այս տարիներին ոչ մի բնապահպանական հարցով չեն զբաղվել, քանի որ վաղուց հայտարարել էին, որ այլեւս չեն ուզում բնապահպանական գործունեությամբ զբաղվել: Ինչ վերաբերում է ծառահատումներին, ապա քաղաքային իշխանություններն ասում են, որ փոխում են հիվանդ, ծեր ծառերը, սակայն ես՝ որպես մասնագետ կարծում եմ, որ չես կարող համատարած ծառեր կտրել, եթե իրապես նորմալ գնահատել ես ծառերի վիճակը: Չեն կարող բոլոր ծառերը հիվանդ լինել, չեն կարող համատարած լինել անկենսունակ: Քաղաքապետարանը տալիս է ընդհանուր գնահատական, բայց յուրաքանչյուր ծառ պետք է ուսումնասիրեն մեկառմեկ: Մի ծառը կարող է լինել փտած, հիվանդ, բայց մի քանի մետր այն կողմ աճած ծառը կարող է լրիվ առողջ լինել: Դրա համար ուսումնասիրություն է պետք, ինչը Երեւանի քաղաքապետարանը չի անում: Ընդհանուր գնահատականը չի կարող նման մեծ ծրագրի համար հիմք հանդիսանալ: Քաղաքային իշխանությունը պնդում է, որ ինչ-որ շենքի բնակիչներ դիմել են իրենց եւ ասել, որ ծառի վրա մլակներ կան, եւ ամռանը դրանք բնակարան են ներթափանցում, կամ ասում են՝ «Նաիրի» ԲԿ-ից են դիմել եւ ծառերի մասին դժգոհություն հայտնել: Եթե կա նման պահանջ, պետք է համապատասխան լուծումներ գտնել, բայց ոչ համատարած բոլոր ծառերը կտրել: Ծառեր կան, որոնք պետք է ուղղակի բուժել: Հայաստանում կամ ծառը կտրում են ամբողջապես, կամ ոչինչ չեն անում: Մենք տեսնում ենք, որ կան հատված ծառեր, սակայն դրանց հաստ բների վրա տերեւներ են դուրս եկել, այսինքն՝ ծառը կտրելով՝ ծառի վերջը չեն տալիս, սակայն միեւնույն ժամանակ այն դադարում է կատարել իր հիմնական ֆունկցիան՝ փոշին իր վրա չի վերցնում, մաքուր օդ չի արտադրում եւ այլն: Սա էլ ոչ հիմնավոր, անադեկվատ հիմնավորումների արդյունքում է արվում»:

Հարցին, թե կա՞ն այստեղ կոռուպցիոն տարրեր, Զարաֆյանը պատասխանեց. «Այդ հարցով պետք է զբաղվի Կոռուպցիայի կանխարգելման մարմինը, ինչի՞ համար է այն ստեղծված: Կոռուպցիան մեզանում դարձել է քաղաքական տերմին, եւ ես չեմ կարող պնդումներ անել, քանի որ չունեմ ձեռքիս տակ փաստեր, բայց կա դրա համար համապատասխան մարմին, որը պետք է զբաղվի այդ հարցերով»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

ԻՆՉՊԵՍ ՀԱՅՐԵՆԱՍԵՐԻՆ ՏԱՐԲԵՐԵԼ ՎԱԽԿՈՏ ՊՈՌՈՏԱԽՈՍԻՑ

Արդեն երեք օր է՝ իշխանության եւ ընդդիմության տարբեր ներկայացուցիչներ հրապարակային հարձակում են կազմակերպել Արցախի Հանրապետության Անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Վիտալի Բալասանյանի դեմ, միայն այն բանի համար, որ նա համարձակություն է ունեցել ասելու, որ Հայաստանի փրկությունը միութենական պետության կազմ մտնելն է՝ մի կազմավորում, որը դե յուրե գոյություն չունի, միջազգային իրավունքի սուբյեկտ չէ: Բոլորը նրան մեղադրում են Հայաստանի անկախության եւ ինքնիշխանության դեմ կատարած ոտնձգության համար, մեկը ջեբկիր է անվանում, մեկը՝ Փաշինյանի գործակալ, մյուսը նրա ասածը որակում է ցնդաբանություն: Ընդ որում, սա ասում են մի մարդու հասցեին, որն իր կյանքը նվիրել է Արցախի ու Հայաստանի պաշտպանությանը, մասնակցել հայրենիքի համար մղված բոլոր պատերազմներին, եւ ասում են մարդիկ, ովքեր պատերազմի ժամանակ ոչ թե մարտական գործողություններին չեն մասնակցել, այլ երեւի իրենց տան դռնից դուրս չեն եկել՝ շառից-փորձանքից հեռու լինելու նկատառումներից ելնելով: Շատ ժամանակ հայրենասիրության մասին խոսելը ոչ թե հայրենասիրության, այլ դեմագոգիայի դրսեւորում է, որովհետեւ բառերը ոչ մի արժեք չունեն, երբ չեն ամրապնդվում կոնկրետ գործողություններով:

Արդյո՞ք Բալասանյանին քննադատողները նրանից ավելի հայրենասեր են կամ ավելի շատ են մտածում Հայաստանի անկախության կամ ինքնիշխանության մասին, արդյո՞ք Բալասանյանն իրոք ստրկամիտ մեկն է, որը չի ուզում Հայաստանը տեսնել անկախ եւ ինքնիշխան, այլ ինչ-որ միութենական կազմավորման մեջ: Ինչպես արդեն ասացինք՝ Բալասանյանին հայրենասիրության կամ արժանապատվության բացակայության մեջ մեղադրողները նրա արածի նույնիսկ մեկ տոկոսը չեն արել հայրենիքի պաշտպանության համար, իսկ ամենակախյալ երկիրը համարվում է անպաշտպան երկիրը: Այդ դեպքում ինչո՞ւ է Բալասանյանը նման հայտարարություն արել: Կա երկու պատճառ՝ անցյալի փորձը եւ ապագայի նկատմամբ ունեցած մտավախությունը:

Անցյալի փորձ: Բալասանյանը երկար տարիներ եղել է Արցախի Հանրապետության Անվտանգության խորհրդի քարտուղարը, զբաղեցրել է տարբեր պաշտոններ, պատերազմների՝ թշնամու կողմից Արցախի դեմ իրականացված ռազմական գործողությունների ժամանակ եղել է առաջնագծում, կազմակերպել է իրեն վստահված ռազմաճակատի պաշտպանական, մարտական գործողությունները: 2020-2023 թվականների փորձը Բալասանյանին հանգեցրել են այն եզրակացության, որ Հայաստանն ընդունակ չէ ինքնուրույն պաշտպանել ոչ միայն Արցախի անվտանգությունը, որի երաշխավորն էր իրեն հռչակել, այլեւ հենց իր՝ միջազգայնորեն ճանաչված սահմանների պաշտպանությունը: Այս դեպքում Արցախի եւ Հայաստանի տարանջատումն արհեստական է, որովհետեւ եթե Հայաստանը կարողանար պաշտպանել իր տարածքային ամբողջականությունը, ապա կարող էր պաշտպանել նաեւ Արցախի անվտանգությունը, թշնամին երկու դեպքում էլ նույնն է: Այնպես չէ, որ Հայաստանն ուժ չուներ՝ Արցախը պաշտպանելու, բայց ուժ ունի Սյունիքը կամ Գեղարքունիքը պաշտպանելու համար: Երբ որեւէ երկիր չի կարող, ընդունակ չէ ինքնուրույն պաշտպանել իր անվտանգությունը, ունի երկու տարբերակ՝ կամ հանձնվել թշնամու ողորմածությանը, կամ փնտրել որեւէ այլ՝ ավելի ուժեղ արտաքին հովանավոր կամ անվտանգության երաշխավոր, որն ընդունակ կլինի պաշտպանել իրեն թշնամու ագրեսիայից: Երկու դեպքում էլ երկիրը կորցնում է իր անկախության եւ ինքնիշխանության մի մասը, հարցն այն է, թե որքանով: Բալասանյանը տեսնում է, որ Փաշինյանի իշխանությունն ընտրել է առաջին տարբերակը՝ հանձնվել թշնամու ողորմածությանը, եւ ըստ էության դեմ է դրան:

Ապագայի հանդեպ ունեցած մտահոգություն: Բալասանյանն իր հարցազրույցում ասում է, որ աշխարհը փոխվում է՝ համաշխարհային պատերազմ է սկսվել, աշխարհի քարտեզը փոխվում է, եւ դա վերաբերելու է նաեւ Հայաստանին, եւ եթե մենք ճիշտ չկողմնորոշվենք, չենք փրկվի: Ըստ Բալասանյանի, Իրանը հաղթելու է Միացյալ Նահանգներին կամ առնվազն չի պարտվելու, այն հույսերը, թե ԱՄՆ-ն հանուն ԹՐԻՓՓԻ կապահովի Հայաստանի անվտանգությունը, անիրական են, որովհետեւ Իրանին չհաղթելու դեպքում ԱՄՆ-ն կորցնելու է հետաքրքրությունն այս տարածաշրջանի նկատմամբ: Չունենալով արտաքին երաշխավոր՝ Հայաստանն անմիջապես կդառնա Ադրբեջանի եւ Թուրքիայի համար գայթակղիչ պատառ: Դրանից խուսափելու համար Բալասանյանն առաջարկում է շարունակել հարյուր տարի իրեն արդարացրած քաղաքականությունը եւ դառնալ միութենական կազմավորման անդամ, ավելի պարզ՝ շարունակել Ռուսաստանին դիտարկել որպես Հայաստանի անվտանգության երաշխավոր:

Հնարավոր է, որ Վիտալի Բալասանյանը սխալվում է, հնարավոր է, որ նա մեզ սխալ ընտրություն է առաջարկում, հնարավոր է, որ Ռուսաստանը չցանկանա կամ չկարողանա դառնալ Հայաստանի անվտանգության երաշխավորը: Բայց այդ դեպքում նրան «ջեբկիր», «Նիկոլի գործակալ» կամ «ցնդած» անվանողները, վիրավորելու կամ անվանարկելու փոխարեն, ճիշտ կանեն՝ պատասխանեն երկու հարցի. արդյո՞ք իրենք կարող են երաշխավորել Հայաստանի արտաքին անվտանգությունը, եւ եթե թշնամին հարձակվի Հայաստանի վրա, պատրաստ են զենք վերցնել, գնալ ու կռվել թշնամու դեմ: Եթե իրենք պատրաստ չեն կամ բավարար ուժ չունեն դա անելու, իրենց փոխարեն ո՞վ է դա անելու, ո՞ւմ են տեսնում այդ երաշխավորի դերում: Ո՞րն է այլընտրանքը: Մյուս խոսակցությունները՝ անկախության, ինքնիշխանության եւ այլնի մասին, միայն ծիծաղ, ավելի ճիշտ՝ խղճահարություն են առաջացնում:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՆԻԿՈԼԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԳԻՆԸ

Ժամանակին ՀՀ վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձը «կռիվ էր տալիս» Սյունիքով Ադրբեջանին անխոչընդոտ միջանցք հատկացնելու գաղափարի դեմ: Բացարձակ չէր ընդունում այն՝ ասելով, թե դրա մասին որեւէ խոսք չկա 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունում: Բայց քանի որ դիմացինը Իլհամն էր, որն անընդհատ շանտաժի էր ենթարկում իրեն սահմանային հարձակումներով եւ, ընդհանրապես, նոր պատերազմի սպառնալիքով, այնուամենայնիվ, հատկացվեց անխոչընդոտ երթեւեկության միջանցք: Վաշինգտոնյան եռակողմ համաձայնությամբ 20 թվի նոյեմբերի 9-ին նախատեսվածից մի էական տարբերություն արվեց՝ այն, որ միջանցքի վերահսկողությունը ռուսների փոխարեն անցավ ամերիկացիներին: Ու ամերիկյան փաթեթավորմամբ ստացավ հնչեղ անուն՝ ԹՐԻՓՓ, ինչն ընդունելի դարձրեց այն. համենայնդեպս, ինչպես սիրում է կրկնել վերը նշված անձը, հայ ժողովուրդը դուրս չեկավ փողոց ու հեղափոխություն չարեց, ուրեմն համաձայն է իր կայացրած որոշումներին:

Հիմա հերթը հասել է Իլհամի մեկ այլ՝ Հայաստան 300 հազար ադրբեջանցիների «վերադարձի» պահանջին: Վերջին երկու տարում դրա կատարումը եւս կատեգորիկ բացառվում էր նշված անձի կողմից: Ու հանկարծ պարզվում է, որ դա ոչ միայն հնարավոր է, այլեւ արդեն գործնական աշխատանք է տարվում այդ ուղղությամբ (https://hraparak.am/am/post/fcd429b7ed4de75d3ee6e0a22ec42174), ինչը նշանակում է, որ Բաքվից հնչող սպառնալիքն ու շանտաժն ավելի են ուժեղացել: Ինչն իր հերթին նշանակում է, որ ինքը ստիպված է բավարարել նաեւ այդ պահանջը: Իսկ եթե դա տեղի ունենա, ապա ամենաուշը երկու սերունդ անց Հայաստանի Ազգային ժողովի ընտրությունների արդյունքում խորհրդարանում մեծամասնություն կկազմեն ազգությամբ ադրբեջանցի՝ «հայաստանցի» պատգամավորները: Դա նորություն չէ, դրա մասին բազմիցս է ասվել եւ այդ թվում՝ տողերիս հեղինակի կողմից: Եվ դա այն գինն է, որով Հայաստանը վճարելու է, որպեսզի երկու երկրների միջեւ տիրի կեղծ խաղաղություն: Կներեք, սխալվեցի, ոչ թե երկու երկրների, այլ հայերից զուրկ Ադրբեջանի եւ ադրբեջանցիներով լեցուն «Արեւմտյան Ադրբեջանի» միջեւ: Իսկ դրանից մի քանի տարի հետո էլ տեղի կունենա երկու «երկրների» միավորումը: Ավելի ճիշտ՝ «Արեւմտյան Ադրբեջան» կոչված միավորի ներառումը Ադրբեջանի Հանրապետության կազմում: Ճիշտ այնպես, ինչպես հիմա ընթանում է ինքնավար Նախիջեւանի ներառումը ադրբեջանական օրենսդրական փոփոխության միջոցով:

Սա այն գինն է, որ վճարելու է հայ ժողովուրդը, որպեսզի տիրի այն խաղաղությունը, որ նախագծվել է ՀՀ վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձի կողմից: Եթե դրան համաձայն է հայաստանցիների մեծամասնությունը, ապա հունիսի 7-ին այդ մարդիկ կարող են չգնալ ընտրատեղամաս, ինչպես դա տեղի ունեցավ 2021 թվականի հունիսի 20-ին: Կամ էլ՝ գնալու դեպքում ընտրեն նիկոլական ՔՊ-ին եւ կամ նրան ծառայող այս կամ այն կուսակցությանը: Իսկ եթե համաձայն չեն, ապա այս երեք ամսվա ընթացքում պետք է իրենց միջից դուրս հանեն անտարբերությունը: Եվ հայրենասիրական զգացումով տոգորված՝ հանդես բերեն քաղաքացիական գիտակցություն ու «ոչ» ասեն իշխանությունը պահպանելու նպատակով Հայաստանն ադրբեջանցիներով լցնելու գաղափարին:

Իսկ դա նշանակում է, որ պետք է մերժեն հանուն իշխանությունը պահպանելու՝ երկու սերունդ անց Հայաստանը կործանելու նիկոլական ծրագիրը: Եվ, վերջապես, մերժեն վարչապետ Նիկոլին ու նրա ՔՊ-ական կառավարությունը:

ՀԳ. *Եթե երեք ամիս անց վերարտադրվի Նիկոլի իշխանությունը, երկու-երեք տարի անց մենք ականատես կլինենք այն պատկերին, երբ Արցախով Հայաստանի Հանրապետության տարածք կմտնեն թյուրքախոս քոչվոր ցեղի ներկայացուցիչները:*

Վախթանգ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

«Հրապարակը» զրուցել է ***Արտաշես սարկավագ Աջապահյանի*** *հետ:*

ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ ԱՐԳԵԼԵԼ ԵՆ ԲԱՆԱԿՈՒՄ ԽԱՉԵՐ ԿՐԵԼ

- Ինչպե՞ս են Միքայել սրբազանի առողջական վիճակն ու ինքնազգացողությունը:

- Լավ է, փառք Աստծո, արդեն ապաքինվում է վիրահատությունից հետո: Լավ զգալը հարաբերական է, քանի որ, ճիշտ է՝ ԱԱԾ-ում պայմաններն ավելի վատ էին, բայց այնտեղ էլ մարդկանց հետ շփումն էր ավելի շատ, թույլտվություն կար, որ ամսական գոնե 2 անգամ 4-5 հոգի այցելեին սրբազանին: Բացի դրանից, նաեւ կարող էին պատգամավորներն այցելել, իսկ տնային կալանքի պարագայում այցելությունները փակված են՝ ոչ ոք չի կարող այցելել, բացի այն 4 անձանցից, որոնց դատարանն է թույլտվություն տվել: Այդ առումով ավելի մեկուսացած է, եւ մարդը մեկուսանալուց դժվար թե իրեն լավ զգա: Սրբազանի ուժը, զորությունը, այն, որ Աստված սրբազանի հետ է, բնականաբար, օգնում են, որ նա այդ ամեն ինչը տանի: Աստված մեզ հետ է, ամեն բան էլ կհաղթահարենք: Ինչպես ասում է Սուրբ Գիրքը՝ ով համբերե, կապրի:

- Ստեփան Ասատրյանը՝ նախկին կարգալույծ քահանան, վերջերս Միքայել սրբազանի հասցեին հերթական զրպարտությունն է արել, իբրեւ թե սրբազանը կին ու դուստր ունի:

- Լսել եմ, ցավոք սրտի, արդեն պետական քաղաքականություն են դարձել բամբասանքը, զրպարտությունը, հայհոյանքը եւ բավական լայն ծավալում են ստացել հասարակության մեջ, նաեւ դարձել են ընդունելի մի բան, ինչը շատ վատ է: Շատ ցավալի է, անպատասխանատվությունը մարդկանց համար դարձել է քաղաքականություն, որովհետեւ հիմա ասում են բաներ, որոնց համար ոչ ոք պատասխանատվություն չի կրում: Եվ ինչ ուզում, ասում են, ասելուց հետո էլ ասում են՝ եթե սխալ է, թող հերքեն: Այսինքն՝ այս հիմարությունը, վերջիվերջո, պիտի ավարտվի: Ի՞նչ է նշանակում մարդուն բամբասել, զրպարտել եւ ասել՝ հերքի, այսինքն՝ այդ մարդը պիտի իր բանուգործը թողնի ու, այսպես ասած, ամեն շան հաչոց հերքի: Բնական է, այդ հերքելն էլ մարդու կյանքից ժամանակ ու միջոցներ է տանում: Այսինքն՝ այս հիմարությունը մենք պետք է դադարեցնենք, եթե ուզում ենք իրոք հզոր պետություն ունենալ, այս բամբասանքին, բանսարկությանը վերջ դնելու համար, միանշանակ, պետք է հրաժարվենք դրա աղբյուրից, որը մի անձ է, ինչքան էլ որ ուզենանք այլ ուժեր եւս տեսնել: Ամեն դեպքում, ներկայում մի անձ է եւ իր շուրջը համախմբված մի խումբ անձինք, որոնք զրպարտությունն ու բամբասանքը դարձրել են պետական քաղաքականության գործիք:

- Ստեփան Ասատրյանի պահվածքը միայն հրահանգներով եք պայմանավորում, թե՞ կյանքի չկոչված ինչ-որ ամբիցիաներ, ակնկալիքներ կան, որոնք չեն բավարարվել:

- Գիտեք, եթե անդրադառնանք իր նախորդ հաղորդումներին եւ ընդհանուր նայենք իր խոսելաոճը, ինքը միշտ իր պատասխանատվությունը փորձում է գցել տարբեր մարդկանց, կառույցների վրա, ինչը վկայում է իր թույլ մարդ լինելու մասին: Ինքն ասում է, որ իրեն ստիպել են սա անել, այն անել՝ իր կամքին հակառակ: Եթե ինքն այնպիսի մարդ է, որին հնարավոր է ստիպել՝ ինչ-որ բան անել իր կամքին հակառակ, ընդամենը խոսքով, դա նշանակում է, որ ինքը թույլ, խղճուկ անձնավորություն է, եւ չի բացառվում, որ հիմա էլ են իրեն ստիպում: Ինքը հեռուստատեսության եթերում իրեն անվանում է թույլ եւ խղճուկ ոչնչություն: Եթե իր արտահայտությունները փորձենք բացել, որ ասում էր՝ ինձ ստիպում էին, ինձ ուղարկում էին ցույցերի, ինձ ստիպում էին, դա նշանակում է, որ ինքն իր բերանով ասում է՝ ես թույլ եւ խղճուկ մարդ եմ: Թող փորձեն, օրինակ, ինձ կամ մեկ ուրիշին, կայացած մարդկանց ինչ-որ բան ստիպել կամ պարտադրել, կկարողանա՞ն. իհարկե՝ ոչ:

- Մամուլը գրում է, որ Փաշինյանը Եկեղեցու դեմ գործողություններում ընդմիջում է վերցրել, որովհետեւ դա նախընտրական շրջանում վնասում է իր վարկանիշին: Համաձա՞յն եք, թե՞ մեկ այլ ծրագիր է մտմտում:

- Իրականում, ի՞նչ պայման կարող է լինել, օրինակ, Աստծո կամ սատանայի միջեւ, բնականաբար՝ ոչ մի… ինքը ոչ մի կերպ, իմ կարծիքով, չի հրաժարվելու Եկեղեցին հալածելուց, Եկեղեցու դեմ պայքարելուց, որովհետեւ չարիքի խորհրդանիշ է եւ իր ամբողջ կյանքով է վաստակել այդ անունը՝ իր խոսքերով, իր ստերով, նույնիսկ նախքան իշխանության գալը՝ իր ամբողջ կյանքով: Մարդիկ խոսում են, որ ինքը Հայաստանում հիմք է դրել այն լրատվությանը, որ ասում են՝ ոչ թե փող են վերցնում գրելու, այլ՝ չգրելու համար: Սա բնակչության մեջ լայնորեն տարածված կարծիք է եւ, կարծում եմ, բավական հիմնավոր: Հիմա նույն բանով զբաղվում է որպես պետական գործիչ՝ տարբեր խառնակչություններ հրահրելով: Բնական է, որ ինքը չի հրաժարվելու, որովհետեւ, իմ գնահատմամբ, ինքը չարին սերտաճել է եւ չի հրաժարվի Աստծո դեմ իր թշնամանքից… Ինքն իրականում Աստծո թշնամին է, եւ դա ակնհայտ է: Եվ թող չձեւացնի, թե իբր ուզում է Եկեղեցին մաքրել, եթե ինքն ուզում է Եկեղեցին մաքրել, ինչո՞ւ «Եկեղեցու պատմություն» առարկան հանեց դպրոցներից՝ հարց: Եթե իրոք Եկեղեցու զավակ է, կարող էր դեմ լինել այս կամ այն հոգեւորականի մասին «Եկեղեցու պատմության» մեջ ինչ-որ մի դրական կամ բացասական դրվագի: Ասեր՝ չէ, այս մարդը լավ մարդ չէ, ես կարծում եմ, որ այս մարդու մասին «Եկեղեցու պատմության» մեջ հանիրավի լավ գնահատական եք տվել, փոխեք: Դա կարող էր անել, եթե իր պայքարն անձերի դեմ էր, բայց ինքն ամբողջ առարկան հանեց, թողեց մի ամբողջ սերունդ անկիրթ՝ հոգեւոր առումով, ինչը որ անհնար է անի Եկեղեցու զավակը կամ քրիստոնյան ընդհանրապես: Եթե ինքը քրիստոնեական արժեքների կրողն է, ամեն ինչ կաներ, որպեսզի այդ արժեքները փոխանցվեին նաեւ իր զավակներին, սերունդներին, ժողովրդին:

- Իսկ եթե դրա հակառակն է անում…

- Դա նշանակում է, որ ինքը քրիստոնեության մեջ չի տեսնում այն արժեքը, այն կարեւորագույն հիմքը, ֆունդամենտը, որը պետք է փոխանցել ապագա սերունդներին, հետեւաբար, ինքը դրա կրողը չէ: Եթե դա տեսներ, դրա կրողը կլիներ, բայց եթե ինքն իր գործով ցույց է տալիս, որ Եկեղեցու մեջ չի տեսնում այն կարեւորագույն բանը, որ պետք է փոխանցել հետագա սերունդներին, դա վկայությունն է այն բանի, որ ստախոս է եւ քրիստոնյա չէ: Հակառակ դեպքում կարող էր ասել՝ գիտե՞ք ինչ կա, ես էլ եմ ուզում, որ «Եկեղեցու պատմություն» առարկա լինի, բայց ինձ վրա կան արտաքին ճնշումներ, ես ստիպված եմ եւ այլն: Բայց ինքը դա էլ չի անում, հակառակը՝ թեզը տանում է այն ուղղությամբ, թե իբր պատմության մեջ ներկայացվածն այլեւս «Եկեղեցու պատմություն» առարկայի կարիք չունի: Եթե այդ թեզն է առաջ տանում, այդ դեպքում ես էլ կասեմ՝ եթե դու որպես պատմություն ես դիտարկում առարկան, ուրեմն մտցրու որպես կրոն, որպես քրիստոնեություն: Մի քրիստոնյա երկրում ենք ապրում, որտեղ 95 տոկոսը քրիստոնյա է՝ հայ առաքելական եկեղեցու հետեւորդ, ու այդ 95 տոկոսը պետք է զրկված լինի հանրակրթական դպրոցներում սեփական կրոնն ուսումնասիրելուց՝ զուտ այն պատճառով, որ այնտեղ ընդամենը մի 3-4 տոկոս մարդիկ կան, որոնք այդ կրոնի ներկայացուցիչ չեն: Ինչպես ասում էր այն դասականը՝ իյա, լո՛ւրջ: Այդ դեպքում, դուք կարող եք պարզապես այդ փոքր քանակի մարդկանց համար այդ դասը դարձնել կամավոր, ուզում եք՝ գնացեք, չեք ուզում՝ գնացեք այլ դասի: Իսկ եթե նորմալ պետություն լիներ, ավելի հզոր, իրոք բանական, այդ մարդկանց կարող էր առաջարկել, որ իրենք էլ իրենց կրոնական ուսմունքն անցնեին՝ նույն հանրակրթական դպրոցներում: Օրինակ, եզդիները կարողանային անցնել իրենց կրոնական դասերը: Ո՞վ պետք է դրան դեմ լինի. իհարկե՝ ոչ ոք, եթե, իհարկե, դա չի դարձվում քարոզ եւ փաթաթվում ամբողջ բնակչության վզին: Այլ փաստ էլ կա, որ ինքը քրիստոնյա չէ:

- Ի՞նչ փաստ:

- Ես լսել եմ, որ ինքն արգելել է հայոց բանակում զինվորականներին խաչեր կրել՝ «Աշոտ Երկաթ» խաչեր էին բաժանվում, այդ խաչերն արգելվել է կրել բանակում… Սա ինչի՞ մասին է խոսում, որ ինքը խաչի թշնամին է: Երեւի ներքին կարգով, թե ի պաշտոնե է՝ չգիտեմ, չեմ կարող փաստված հիմնավորել, որովհետեւ լսել եմ: Մարդիկ վախենում են, որ գործի հետ կապված խնդիրներ կունենան, բայց այդ խոսակցությունները կան, որ իրենց պարտադրվել է այդ խաչերը հանել: Ճիշտ է, շատերը չեն հանում, շարունակում են կրել, բայց այդ փաստն արդեն խոսում է իրենց՝ խաչի թշնամին լինելու մասին: Եթե իրենք դեմ են որոշ հոգեւորականների, ինչո՞ւ են խաչը հանել տալիս: Իրենց՝ հոգեւորականներին դեմ լինելը պայմանավորված է Աստծուն դեմ լինելով: Սուրբ հոգուն հայհոյողներ են: Ինչպես ասում է Քրիստոսը, եթե որդուն բան ասեք, կներվի, բայց եթե Սուրբ հոգուն հայհոյեն, չի ներվի: Իրենք Սուրբ հոգուն հայհոյողներ են, որոնք իրենց խմբակով, ցավոք սրտի՝ Աստծո թույլտվությամբ, բայց ոչ երբեք Աստծո կամքով, եկան եւ մեր երկրում իշխանություն զավթեցին: Ճիշտ է, դա երկար չի տեւելու, եւ երեւի Աստված դա թույլ է տվել, որպեսզի մենք չարը բարուց տարբերենք:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ՎՍՏԱՀՈ՞ՒՄ ԵՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՑԻՆԵՐՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Սոցհարցումները պարզել են, որ Ռուսաստանում պետական կառույցների հանդեպ շարքային քաղաքացիների վստահությունը նվազել է, եւ դա սկսել է նկատվել աշնանից, երբ ավելի զգալի են դարձել սոցիալ-տնտեսական խնդիրները, եւ մարդկանց սպասումները՝ տնտեսական առումով, սկսել են հոդս ցնդել:

Ընդ որում, դա կապված չէ ռուս-ուկրաինական պատերազմից ակնկալիքների հետ: Համաձայն Հանրային կարծիքի հիմնադրամի անցկացրած սոցհարցումների, 77 տոկոսը կարծում է, որ Պուտինը լավ է աշխատում, բայց վերջին 12 ամսում սա ամենացածր ցուցանիշն է, առավելագույնը եղել է 83 տոկոս: Սակայն աճել է վարչապետ Միշուստինի աշխատանքը դրական գնահատողների թիվը՝ 54 տոկոսից հասնելով 58-ի: Նվազել է «Եդինայա Ռոսիա» կուսակցության հանդեպ վստահության ցուցանիշը՝ 48-ից հասնելով 36 տոկոսի: nezigar կայքը դա անվանում է բացասական դինամիկա:

Վարչապետ Միշուստինի ռեյտինգի ավելացումը, ըստ սոցիոլոգների, բացատրվում է նրանով, որ նա երկրի սոցիալ-տնտեսական քաղաքականության հիմնական պատասխանատուն է:

Իշխանությունների հանդեպ վստահության նվազումը նաեւ բացատրվում է նրանով, որ խստագույն վերահսկողություն է իրականացվում մեդիադաշտի նկատմամբ, եւ մարդիկ այլընտրանքային ասելիքը տեղ հասցնելու հնարավորություն չունեն:

Հարցումները նաեւ ցույց են տալիս, որ Պուտինի աշխատանքին հավանություն է տալիս հարցվածների 73,3 տոկոսը: Մասնագետները ստեղծված վիճակը գնահատում են «հակասական», քանի որ նախագահին թեեւ աջակցում են, սակայն դժգոհ են նրա վարած ինֆորմացիոն-վերահսկողական քաղաքականությունից եւ փորձում են այլընտրանքային ինֆորմացիա գտնել՝ VPN ծառայություններից օգտվելով: Իսկ Դումայի առաջիկա ընտրությունների նախաշեմին այս տեղեկատվությունը մտորելու առիթ պետք է տա: Ամենայն հավանականությամբ, իշխանության հանդեպ «լոյալությունից շեղվողների հանդեպ խստացումները շարունակվելու են»:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԳՄՍ

ՆԱԽԱՐԱՐԻ՝ 180 ԱՍՏԻՃԱՆՈՎ ՏԱՐԲԵՐՎՈՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի՝ 2022 թվականին կայացրած որոշմամբ՝ 2-րդ եւ 8-րդ, 10-րդ, 11-րդ, ինչպես նաեւ 19 տարին չլրացած 9-րդ դասարաններում 120-200 ժամից ավելի բացակայած աշակերտները չեն փոխադրվելու հաջորդ դասարան եւ պետք է կրկնեն տվյալ ուսումնական տարվա դասընթացը: Սակայն առաջադիմության պատճառով ուսումնական դասընթացը կրկնելու, այսինքն՝ նույն դասարանում մնալու դրույթը հանվեց: Մնաց միայն բացակայությունների պատճառով երկտարեցի մնալու դրույթը: Մեր հարցին, թե 2023-24, 2024-25 ուստարիների ընթացքում քանի աշակերտ չի փոխադրվել հաջորդ դասարան, նախարարությունից պատասխանել են. «2023-2024 ուսումնական տարվա ընթացքում հաջորդ դասարան չի փոխադրվել 774 աշակերտ, իսկ 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում՝ 530 աշակերտ: Տեղեկատվությունը վերաբերում է բոլոր երկտարեցիներին՝ անկախ հաջորդ դասարան չփոխադրվելու պատճառից»:

Սակայն այս տարի, նախարարի որոշմամբ, վերականգնվեց նաեւ ուսումնական առաջադիմության հետ կապված երկտարեցի մնալու դրույթը, այսինքն, եթե նախորդ տարիներին, անկախ գնահատականներից, բոլորը փոխադրվում էին հաջորդ դասարան, ապա այժմ նորից վերադարձել են հին կարգին՝ այժմ արդեն ուսումնական ցածր առաջադիմության հիմքով եւս աշակերտը կարող է նույն դասարանում մնալ: Մենք նախարարությանը խնդրել էինք բացատրել, թե ինչու է վերանայվել այդ որոշումը, եւ երբվանից է գործելու նոր կարգը:

ԿԳՄՍՆ-ից մեզ պատասխանել են. «ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 2012 թ. մայիսի 3-ի N 388-Ն հրամանի հավելվածի 8-րդ, 21-րդ, 43-44-րդ կետերով սահմանվում են տվյալ տարվա դասընթացը կրկնելու դեպքերը: Ըստ միջազգային փորձի՝ տարբեր երկրներում կիրառվում են տարբեր մոտեցումներ՝ սովորողների առաջադիմության գնահատման եւ դասընթացի կրկնության հարցում: Մի շարք զարգացած երկրներում աստիճանաբար սահմանափակվել կամ վերացվել է նույն դասարանում ուսուցումը կրկնելու մեխանիզմը՝ այն փոխարինելով լրացուցիչ աջակցության ծրագրերով եւ անհատական ուսուցման ձեւերով: Միեւնույն ժամանակ, կան երկրներ, որտեղ դասընթացի կրկնության գործիքը պահպանվել է՝ որպես կրթության նվազագույն արդյունքների ապահովման միջոց: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայում կիրառվում են տարբեր մեխանիզմներ՝ թույլ չտալու, որ սովորողը հաջորդ կրթական փուլ անցնի առանց անհրաժեշտ գիտելիքի եւ կարողությունների ձեւավորման: Կրթական համակարգում կարեւոր է ապահովել հավասարակշռություն՝ սովորողի առաջադիմության խթանման եւ կրթական պահանջների պահպանման միջեւ: Եթե սովորողը չի յուրացրել տվյալ դասարանի ուսումնական ծրագրի հիմնական բովանդակությունը, հաջորդ դասարան տեղափոխումը կարող է հանգեցնել ուսումնական էական դժվարությունների: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հրամանով ամրագրվում է, որ որեւէ առարկայից տարեկան 1-3 միավոր գնահատված լինելու դեպքում սովորողը հանձնում է վերաքննություն, չհաղթահարելու եւ առնվազն երկու առարկայից վերաքննությունների արդյունքում 1-3 միավոր գնահատված լինելու դեպքում սովորողը կրկնում է տվյալ դասարանում ուսուցումը: Կրթական մակարդակի ավարտին կազմակերպվող քննությունների դեպքում վերաքննությունների փուլից հետո առնվազն 2 առարկայից 1-7 միավոր (20 միավորային սանդղակով) ստացած լինելու դեպքում սովորողը կրկնում է տվյալ դասարանում ուսուցումը: Տարեկան 200 ժամից ավելի բացակայած սովորողը հանձնում է լրացուցիչ քննություններ ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաներից՝ գրավոր: Սովորողի փոխադրման հարցը որոշվում է օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում՝ նրա հանձնած լրացուցիչ քննությունների կամ վերաքննությունների արդյունքներով: Լրացուցիչ քննությունների արդյունքները լրացվում են որպես կիսամյակային եւ տարեկան գնահատականներ այն դասարաններում, որտեղ կիրառվում է միավորային գնահատում: Այն դասարաններում, որտեղ միավորային գնահատում չի կիրառվում, վերաքննությունների արդյունքները ներառվում են սովորողի կիսամյակային եւ տարեկան բնութագրերում: Լրացուցիչ քննություններին կամ վերաքննություններին չներկայանալու կամ միավորային գնահատմամբ դասարաններում վերաքննության արդյունքում առնվազն երկու առարկայից 1-7 (գնահատման 20 միավորային սանդղակից) միավոր գնահատված լինելու դեպքում սովորողը կրկնում է տվյալ տարվա դասընթացը»:

Այս թեմայով նախօրեին մեզ հարցազրույց տված կրթության փորձագետ Սերոբ Խաչատրյանն ասել էր. «Մինչեւ վերջերս մեզ համոզում էին, որ դպրոցներում պետք է անբավարար թվանշան չլինի, որ բոլոր թվանշանները, որոնք երեխաները ստանում են, լինեն 10, 8 թե 1, համարվում են դրական, եւ տեղափոխվում են հաջորդ դասարան: Իսկ ովքեր փորձում էին ընդդիմանալ այս որոշմանը, նրանց մեղադրում էին հետամնացության, սովետական մտածողության մեջ եւ այլն: Բայց ի՞նչ տեղի ունեցավ. այս որոշումն ընդունելուց կարճ ժամանակ անց նախարարությունը՝ հենց իրենք, ետ բերեցին բացասական թվանշան նշանակելու իրավունքը»:

Մանկավարժական հանրույթում երկտարեցիության հետ կապված կարծիքները տրամագծորեն տարբերվում են՝ ոմանք ասում են, որ դա անիմաստ է, ցանկացած պարագայում երեխան պետք է փոխադրվի հաջորդ դասարան, իսկ որոշ մանկավարժներ կարծում են, որ չառաջադիմող աշակերտին պետք է հնարավորություն տալ՝ բաց թողնված գիտելիքները լրացնելու եւ հիմնարար գիտելիքներ ձեռք բերելու համար:

Զրուցել ենք դպրոցների տնօրենների հետ՝ հասկանալու, թե ինչպես են վերաբերվում ԿԳՄՍ նախարարի հետողորմյային: Գյումրու թիվ 38 հիմնական դպրոցի տնօրեն **Ֆլորա Խաչատրյանը** մեզ հետ զրույցում ասաց, որ ճիշտ էր նախարարի նախորդ որոշումը. «Մենք գերադասում ենք երեխայի շահը: Եթե երեխան մնա նույն դասարանում, այդ երեխան ավելի ճնշված չի՞ լինի: Բայց որ իրավունք ունենք քննություն կազմակերպել եւ երեխային տեղափոխել, դա լավ է: Երեխան ինչ կարողանում է, դա էլ յուրացնում է, դրանից ավելի ոչինչ չի կարող: Որ մնա նույն դասարանում, իմաստը ո՞րն է»:

Վեդի քաղաքի թիվ 1 հիմնական դպրոցի տնօրեն **Ալվարդ Պապոյանը** չի կողմնորոշվում, թե որ որոշումն է ճիշտ. «Այս տարի փոփոխություն եղավ, որ 5-9-րդ դասարանների սովորողները, առնվազն 1 ուսումնական առարկային տարեկան 1-3 գնահատական՝ 10 միավորային սանդղակից, գնահատված լինելու դեպքում վերաքննություն են հանձնում՝ հուլիսի 2-8-ը, իսկ եթե չեն կարող կամ չեն ցանկանում եւ ուզում են ծրագիրը կրկնել, ապա կարող են վերաքննություն հանձնել՝ օգոստոսի 20-25-ն ընկած ժամանակահատվածում: Ձեզ հետաքրքրում է՝ նույն դասարանում մնո՞ւմ են, թե՞ ոչ, իհարկե՝ մնում են: Առնվազն 2 առարկային 1-3 գնահատման պարագայում սովորողը չի փոխադրվում հաջորդ դասարան, կրկնում է տվյալ տարվա դասընթացը: Իմ կարծիքով, դրական է նախարարի վերջին որոշումը: Կարելի է երկու պատասխան տալ. անկեղծ ասած, նախորդ որոշումն էլ եմ ես ողջունում: Մենք չենք կարող ասել՝ որն է ճիշտ, որը՝ սխալ, բոլոր դեպքերում, ինչպես կարգն է, այնպես էլ պետք է վարվենք»:

Արմավիրի մարզի Մյասնիկյանի Արայի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն **Լիլիթ Պետրոսյանը** համաձայն է «երկտարեցի» հասկացությունը վերականգնելու հետ. «Մի ընթացք նաեւ անբավարար գնահատականը չեղարկվեց, ասում էինք՝ ինչ էլ ստանա, երեխայի գիտելիքն այդ առարկայի շրջանակներում այդքանն է, եւ անբավարար գնահատական նշանակելով՝ մենք աշակերտին չենք օգնում: Հիմա նորից վերականգնվեց դա, հատկապես՝ փոխադրումների հետ կապված, նույն հրամանի շրջանակներում է նաեւ 200-ից ավելի ժամ բացակայելու որոշումը: Ասեմ ինչու. երբ որ աշակերտը գիտի, թե, միեւնույն է՝ փոխադրվելու է, ինքը չի աշխատելու: Աշակերտը եթե միտում ունի չսովորելու, եւ այդ չսովորող աշակերտին մի հատ էլ ասում ենք՝ անգամ եթե դու բացակայում ես, միեւնույն է՝ փոխադրվում ես, այս պարագայում ստացվում է, որ աշակերտը կարող է դասի չգա, բայց փոխադրվի, բայց եթե պիտի դասի չգա ու փոխադրվի, հետո մենք հանրակրթություն ո՞նց իրականացնենք այդ աշակերտի հետ, չափորոշիչային պահանջի նվազագույնը ո՞նց իրականացնենք: Այս պարագայում կա լծակ, աշակերտը գիտի, որ 200 ժամը լրանա, ինքը պետք է վերաքննություն հանձնի ուսումնասիրվող բոլոր առարկաներից: Սա նաեւ զգաստացնող է թե՛ ծնողին, թե՛ աշակերտին: Մինչեւ վերաքննություն հանձնելը աշակերտի հետ լրացուցիչ աշխատանք է տարվում: Նախարարի երկրորդ որոշումն ավելի ճիշտ է եւ նպատակային»:

Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոցի տնօրեն **Վարդան Ավետիսյանն** էլ ասաց. «Հատկապես ավագ դպրոցում հաճախելիությունների հետ կապված խնդիրներ գոյություն ունեն, հունվարին շրջանավարտը միասնական քննություններ հանձնելու հնարավորություն ունի: Պատկերացնո՞ւմ եք՝ հաջողությամբ ավարտում է քննությունները, եւ եթե մենք լրացուցիչ վերահսկողական կամ շահագրգռող մեխանիզմներ չունենանք, առաջին հայացքից ինքը դպրոցում էլ անելիք չունի: Եթե մենք չունենանք սահմանված որեւէ շեմ, վատագույն տարբերակը փորձենք դիտարկել, աշակերտն իր նպատակները համարի ավարտած, այլեւս չհաճախի դպրոց, ի՞նչ սահմանափակումներով կարող ենք նրա ներկայությունը դպրոցում ապահովել: Ի վերջո, հանրակրթությունը մի ամբողջական ծրագիր է, որի բովանդակությունը հնարավոր է յուրացնել ինչ-որ իքս ժամանակահատվածում: Բովանդակային մասն ապահովելու համար հաճախումը կարեւոր նախապայման է: Այս առումով ես կարծում եմ, որ բացակայությունների թվով վերահսկողություն իրականացնելն օգտակար գործիք է դպրոցի համար: Բերեք ես գնահատական չտամ՝ ինչով են պայմանավորված նախարարի այդ որոշումները, բայց, ընդհանրապես, հանրակրթության մեջ, աշխարհում ուսումնասիրությունների արդյունքում այսպիսի նորմեր են ի հայտ եկել՝ ոչ մի երկտարեցի երեխա, կամ գոնե մեծ մասի մոտ, ուսումնառության առաջադիմությունը չի աճել: Սովետական ժամանակաշրջանը հիշենք, այդ ժամանակ կրթական համակարգում ավելի շատ էր «դասարանում մնալ» կոչված երեւույթը: Ես չեմ հիշում որեւէ դեպք, աշխատանքային պրակտիկայից, որ երկտարեցի լինելն արդյունավետ լիներ, որ որեւէ մեկն ասեր՝ գիտե՞ք ինչ կա, այս աշակերտը մնաց եւ մեր դասարանում սկսեց լավ սովորել: Բացառություններ կարող են լինել, բայց, ի վերջո, այդ հրամաններն ուսումնական կրթական խնդիրներ են լուծելու: Ուսումնասիրություններն ինչ են տվել՝ չեմ կարող ասել, բայց իրականում սրանք գործիքներ են, որ կրթական որոշակի խնդիրներ են լուծում»:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՀԱՆԳԻՍՏ ԿԱՐՈՂ Է ԳԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Հայաստանի արտաքին հետախուզության ծառայությունը քանիցս միջամտել է ներքաղաքական հարցերին: Հիմա էլ հայտարարություն է տարածել այլ երկրում (Ռուսաստանում) ՀՀ քաղաքացիների նկատմամբ գործադրվող ճնշումների եւ սպասվող ընտրական գործընթացներին միջամտության վերաբերյալ: Իբրեւ թե «փորձում են ճնշում գործադրել հայազգի եւ ՀՀ քաղաքացի հանդիսացող՝ տնտեսական գործունեությամբ զբաղվող անձանց նկատմամբ», որ վերջիններս որոշ քաղաքական ուժերի «ֆինանսական եւ կազմակերպական բնույթի աջակցություն» ցուցաբերեն:

Արդարադատության գեներալ, մայոր **Թաթուլ Պետրոսյանը**, անդրադառնալով փաստին, նկատում է. «Արտաքին հետախուզության ծառայությունն արդեն իսկ Հայաստանի համար ինքնին աբսուրդ էր, քանի որ կա ԱԱԾ, որն իրականացնում էր նաեւ այդ ֆունկցիան: Մենք՝ բոլորս, հիշում ենք, թե այդ կառույցն ինչպես ստեղծվեց, եւ ով նշանակվեց ղեկավար՝ անձ, որը որեւիցե կապ չունի օպերատիվ ծառայության, հետախուզության ու, առհասարակ, իրավապահ համակարգի հետ: Ինչ-որ մի Քրիստինե Գրիգորյան: Հայտարարում են, որ Իսրայել-Իրան պատերազմը Հայաստանի համար կարող է խնդիրներ առաջացնել, ինչը կարող ենք համարել օբյեկտիվ ահազանգ, բայց Նիկոլ Փաշինյանն ու իր խմբակը շան տեղ չդրեցին այդ զեկույցը՝ սկսեցին «պեռաշկի» եւ «կուկուռուզ» ուտել նույն օրը, ուրախ ավտոբուսով շրջագայել, մարդկանց հետ իբրեւ թե զրուցել: Ինչ վերաբերում է այս հայտարարությանը, դա աբսուրդ է. ՀՀ քաղաքացին ամեն րոպե կարող է գալ Հայաստան եւ ընտրություններին մասնակցել ու իր քվեն տալ այս կամ այն քաղաքական ուժին: Դա մարդու սահմանադրական իրավունքն է, որին ոչ մեկը չի կարող դեմ արտահայտվել, բայց սրանց տոդատակերի ասելիքն այն է, թե իբր ռուսամետ քաղաքական ուժերն են այդ պրոցեսը կազմակերպում, ենթադրում են, որ նրանք նաեւ շահագրգռում են: Գործնականում սա մարդու պարզ իրավունքն է: Անկախ այն բանից, թե որտեղ է նա՝ ԱՄՆ-ում, թե Ռուսաստանում, եթե ՀՀ քաղաքացի է, ցանկացած պահի կարող է ազատորեն գալ հայրենիք եւ մասնակցել ընտրություններին: Քրիստինե Գրիգորյանն անամոթաբար ծառայում է ՔՊ-ին, սակայն ես չեմ զարմանում, քանի որ այդ ծառայությունը ստեղծվեց բացառապես հենց այդ նպատակներով: Իրենք Եվրոպայից միլիոններ են ստանում, իբրեւ թե այն բանի համար, որ քայլեր ձեռնարկեն, որպեսզի այլ երկրներ չխոչընդոտեն Հայաստանի ընտրություններին, բայց այդ քայլով Եվրոպան հենց ինքը միջամտում է պրոցեսին եւ խոչընդոտում: Անգամ ԵՄ-ից պահանջել են վերահսկող խումբ՝ ընտրությունների համար, դեսանտ են Հայաստան բերում: Իրենց ստորությունը թաքցնելու համար ինչ ասես անում են: Մարդիկ ահազանգում են, որ իրենց բնակարանում 70 մարդ են գրանցել, եւ փոխանակ այդ հարցերով զբաղվեն, տեսեք, թե ինչերի ետեւից են ընկել»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հայ մարդու գործարար ինստինկտներին վստահելու ժամանակն է

Ռուս-ուկրաինական, ինչպես նաեւ ամերիկա-իսրայելա-իրանական պատերազմներն ապացուցում են, որ ժամանակակից պատերազմներում հաղթելը կամ պարտվելը ոչ երկրի մեծ կամ փոքր լինելու եւ ոչ էլ մայրաքաղաք գրավել-չգրավելու մասին են: Ժամանակակից պատերազմներում հաղթանակներն ու պարտություններն ավելի շատ տնտեսության արդյունավետության, կոմունիկացիաների վիճակի, բանակի տեխնոլոգիականացվածության ու ներհասարակական համերաշխությանը վերաբերող մեծություններ են:

Այս առումով, ամենեւին չուզենալով, որ ամերիկա-իսրայելա-իրանական պատերազմը երբեւէ սկսված լիներ, հետն էլ գիտակցելով, թե ինչպես պատերազմը սկսվելու, այնպես էլ դրա ավարտի վրա ազդելու Հայաստանի հնարավորությունները շատ համեստ են, չենք կարող չարձանագրել, որ պատերազմից հետո՝ իր կրած կորուստները հնարավորինս արագ վերականգնելու Իրանի առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարման գործում Հայաստանի լայնածավալ ներգրավվածությունը կարող է ոչ միայն հարեւան երկրին օգնելու մեր պատրաստակամության առհավատչյան լինել, այլ նաեւ՝ մեր տնտեսության վերաակտիվացման իրական հնարավորություն դառնալ, եթե, իհարկե, Հայաստանում հունիսի 7-ի ընտրությունները կայանան «երկիրն ու պետությունը հայ մարդու գործարար ինստինկտներին վստահելու տրամաբանությամբ»:

Սակայն, երբ տեսնում ենք, որ այսքան բան այս երկրի գլխին բերած այսօրվա իշխանություններն այսքան բան բերելուց հետո անգամ չեն հասկացել, որ այն ամենը, ինչն իրենք բերել են այս երկրի գլխին, բերել են ոչ թե այն պատճառով, որ երկրի խաղաղությունը քիչ են կապել թշնամուն զիջումներ անելու հետ, այլ բերել են, որովհետեւ այս երկրի խաղաղությունն ամբողջությամբ թշնամուն արված զիջումներով են պայմանավորել: Երբ տեսնում ենք, որ մեր երկրի գեներալն այսքանից հետո անգամ չի հասկացել, որ ինքն Արցախի Հանրապետության անվտանգությունն ու հարատեւությունը ձախողել է ոչ թե Արցախի Հանրապետության անվտանգությունն ու հարատեւությունն օտար միությունների հետ քիչ կապելու, այլ այդ անվտանգությունն ու հարատեւությունը Արցախի ու Հայաստանի Հանրապետությունների տնտեսական, ռազմաքաղաքական ու ռազմարդյունաբերական կարողությունների հետ չկապելու պատճառով, հասկանում ենք, որ եկել է ժամանակը, որպեսզի այս երկիրը գալիք ընտրություններում իր ընտրությունը ոչ թե այսօրվա քաղաքական դասի առանձին կողմերի, այլ երկիրն ու պետությունը հայ մարդու գործարար ինստինկտներին վստահողների միջեւ անի:

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 12.03.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԻՆՉՊԵՍ ԲՈՆԿՎԵՑ ՈՒ ՄԱՐԵՑ ԻՐԱՆԱ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԼԱՐՈՒՄԸ

Փորձագիտական շրջանակներում վերջին օրերին քննարկում են հնարավոր նոր՝ «ադրբեջանական ճակատի» բացումը: Իհարկե, դավադրապաշտական տեսությունների պակաս չի զգացվում: Սակայն այս իրավիճակում կարեւոր է էսկալացիայի հնարավոր ռիսկերը ճիշտ գնահատելն ու հաշվարկելը՝ գրում է քաղաքագետ Սերգեյ Մարկեդոնովը: Բաքվի եւ Թեհրանի հարաբերությունների լարման պատճառն իրանական դրոնների՝ Նախիջեւանի վրա հարձակումն էր: Դեռ օրեր առաջ Նախիջեւանի ԻՀ-ն դիտարկվում էր բացառապես «Թրամփի ուղու» քննարկումներում: Սակայն մեծ գեոպոլիտիկան իր ուշադրությունից դուրս չթողեց նաեւ Ադրբեջանին: Բաքուն շատ կտրուկ արձագանքեց փաստին՝ Իրանի դեսպանին կանչեցին ԱԳՆ, փոխանցեցին բողոքի նոտա: Ալիեւն ԱԽ արտակարգ նիստ հրավիրեց, բանակը բերվեց մարտական բարձր պատրաստականության, կոշտ գնահատականներ տրվեցին, եւ նույնիսկ հնչեցին սպառնալիքներ՝ ուղղված Թեհրանին: Թեհրանից ադրբեջանական դիվանագիտական անձնակազմը տարհանվեց: Եվ կարելի էր կանխատեսել, որ կողմերի միջեւ ճգնաժամը խորանալու է, սակայն մարտի 8-ին անակնկալ կերպով իրավիճակը սկսեց դեէսկալացիայի գնալ:

Մասնավորապես, հեռախոսազրույց տեղի ունեցավ Ադրբեջանի եւ Իրանի նախագահների միջեւ՝ Թեհրանի նախաձեռնությամբ, Փեզեշկիանը հայտարարեց, որ պատրաստ է հետաքննել Նախիջեւանում տեղի ունեցած միջադեպը, եւ պնդեց, որ Իրանն այդ հարձակման հետ կապ չունի: Ապա հայտնի դարձավ, որ Բաքուն մարդասիրական օգնություն է ուղարկում Թեհրան: Առհասարակ, Մարկեդոնովի դիտարկմամբ, իրանա-ադրբեջանական հարաբերությունները՝ 91 թվականից ի վեր, միշտ աչքի են ընկել վայրիվերումներով: Դրանք մեկ հասել են զրոյական կետին, մեկ դրսեւորել պրագմատիզմ ու ռացիոնալիզմ: Անշուշտ, Բաքու-Թեհրան հարաբերություններում հիմնական ցավոտ կետը եղել են Բաքու-Թել-Ավիվ դաշնակցային հարաբերությունները: Ժամանակ առ ժամանակ արծարծվել է, այսպես կոչված՝ «Իրանական Ադրբեջանի» հարցը եւ երկու երկրների միջեւ սահմանային փոփոխությունների հեռանկարը: Սակայն երկուստեք էլ հետաքրքրված են եղել՝ զարգացնելու «Հյուսիս-Հարավ» նախագիծը: Բաքուն նաեւ Իսրայելի հետ է հարաբերություններ զարգացնում, բայց պաշտոնապես իրեն հակահիրանական կոալիցիայի մաս չի դիրքավորում: Այստեղ հետաքրքիր է նաեւ այն, թե ինչու Ալիեւը, ի տարբերություն Թուրքիայի նախագահ Էրդողանի, ավելի կոշտ հռետորաբանություն օգտագործեց ընդդեմ Թեհրանի: Հիշեցնենք, որ Թուրքիայում էլ իրանական դրոնային հարձակում էր իրականացվել: Ալիեւը թերեւս փորձում է իր ներքին լսարանի մոտ պահպանել հաղթած առաջնորդի իմիջը: Նրա համար շատ կարեւոր է դա: ԼՂ ամբողջական հայաթափումից եւ Բաքվի վերահսկողության տակ անցնելուց հետո Ադրբեջանը ձգտում է ցույց տալ, որ ինքն այն երկիրն է, որի շահերի հետ պետք է հաշվի նստել: Ըստ էության, սա ինքնահաստատման մի ձեւ է՝ քաղաքական-դիվանագիտական հարթությունում:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am